

1843 ԲԱՉՄԱՎԷՊ 1914

❁ Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

ՀԱՏՈՐ  
ՀԲ  
ՅՈՒՆՈՒՄԲ  
Թ. 1

— ԱԶԳԱՅԻՆ — ԲԱՆԱՌԻՐԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ — ԳԻՏԱԿԱՆ —

❁ ❁ ❁ ❁ ❁ ԱՄՍԱԹԵՐԹ ❁ ❁ ❁ ❁ ❁

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐ ՄԵՍՐՈՎԲԱՅ ՎԱՐՈՒՑ

ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՑ ԳԻՒՏԻՆ\*

ԱՅՆ մեծ մարդու վարքը, որուն ճակատագրուած էր մտքի և գրչի աշխարհակալութեամբ՝ կերպարանափոխել Ասքանազեան ազգին և Հայաստան աշխարհի ոգին և սիրտն, և ապահովել նորա կեանքն ժամանակի հարուածներու դէմ, պահպանել նորա գոյութիւնն ապագայ դարերում, գրած է Կորին, Մեծ Ուսուցչի կրտսերագոյն աշակերտն էրից մին, զոր Ղազար կոչէ «այր ցանկալի»: Կորեան հակիրճ պատմութեան մէջ ամփոփուած է ութսուն և թերևս աւելի ձիգ տարիներու բեղմնաւոր և ստեղծագործ կեանք մի: Այդ կենսագրականն յոյժ համառօտի կ'անցնի Սրբոյն ծննդենէն՝ մինչև աշխարհէ հրաժարին. նորա քաղաքական պատկերն ուրուագծուած է մի քանի բառերու մէջ<sup>2</sup>: Իսկ համեմատաբար աւելի երկար կը զբաղի նորա հոգևոր և առանձնական կեանքի, զրոց զիւտի և անոր տարածման գործողութեանց նկարագրութիւններով:

Թէպէտ և այս մասամբ ևս, կարելի է ասել, որ շատ փափաքելու բաներ անտեսուած են. վաթսունէն աւելի երկարօգի, ուշիմ և փափ-

\* Տես Բազմավէպ 1913 թիւ 11-12 (Հայկական Ֆորեւեան) էջ 122.

1. Էր որդի ան երանելոյ Վարդան կոչեցելոյ... Կոր. էջ 6:

2. Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական առուեսայն իւրոց զօրականացն... Անդ:



կաձայն աշակերտներէն դեռ աւելին կարելի էր յուսալ. բայց ի զուր, տակաւին երկար դարերու մթութեան քողն կու ծածկէ սքանչելի մարդուն Վատարանն, ուստի ծագեցաւ մեզի «Կորոզատուր աստուածեղէն շնորհ և լուսաւոր Վարդապետութիւն և հրեշտակաբար կրօնիցն առաքինութիւն<sup>1</sup>»: Մեր առաջադրած ուսումնասիրութեան մէջ չենք ծրարած կորեան ամրողական պատմութիւնն և ննութեան ենթարկել, այլ մեր բանասիրութեան նիւթ վերցուցեր ենք միայն սկզբի հինգ կամ վեց տողերն, յորում յիշատակուին Մաշտոցի գաւառն՝ Տարօն, զիւղն՝ Հացեկաց, և հօր անունն՝ Վարդան<sup>2</sup>:

Այս թանկագին բառերու առաջնորդութեամբ, տալով մի նոր լուսարանութիւն, պիտի փորձենք նշոյլ մի սփռել թանձրամած խաւարի մէջ, և ցուցանել եթէ հնար լինի, պատմական աղբերաց օգնութեամբ Ս. Մեսրոպբայ տոհմի ծագումն և Տանուտէրական պատիւն: Ուստի մեզ նպատակ դրած եմք ապացուցանել թէ Ս. Մեսրոպբայ պատկանում է Հայկեան շրջանի մեծ նախարարական ցեղի, թէ նորա տոհմը ազգակից էր Արշակունի թագաւորաց, և մերձաւոր արեւակից Ս. Սահակայ, թէ Հացեաց զիւղն սեփականութիւն էր Վահակունեաց տոհմին, ուստի էր հարձն՝ որ ըստ Բուզանդայ՝ ծնաւ որդի մի Վրիկ անուն, մօր կողմէն թոռն Տիրան թագաւորին, և թէ այս Վրիկ նոյն է Վարդանայ հետ, որ սեփականատէր էր Կարճազատաց (կամ Հարճազատաց) զիւղին և հայր Ս. Մեսրոպբայ:

Արդարև գործ դժուարին և անհաւատալի, քան սաւառնակի մը կամ ջրասուզակի զիւտն, և չենք տածեր անքան յանդգնութիւն ոչ յանչափս յօդ բարձրանալու և ոչ ի խորս մխրճելու, այլ հաստատուն գետնի վրայ նստած պիտի փորձենք երկու ամուլ քարեր իրարու շփել, զուցէ կայծ մի ցայտէ և նշոյլ արձակէ այն բազմազարեան խաւարի մէջ, որ կը ծածկէ այդ գաղափարական հորիզոնն<sup>3</sup>:

Իբրև աղբիւր վարուց Մեսրոպբի, յիշուած է նաև Սոփերքի Ա. հտ. «Պատմութիւն վասն սրբոյն Սահակայ Հայրապետին և Մեսրոպբայ Վարդապետին»: Սակայն հարևանցի մի ակնարկ բաւական է հասկանալու այդ ճառագրութեան արժէքն առաջարկեալ հարցի մէջ: Համաձայնելով այլ բանասիրաց կարծեաց, նաև ըստ մեր տկար տեսութեան, ոչ մի պատմական կարևորութիւն չունի և ոչ համեմատելի կորեան պատմութեան հետ, թող թէ նորան վերագրել: Յետին դարերու գործ է, մի ներքողեան յերկրուած մեր չորս պատմիչներու գործերուց:

1. Կորիւն... Անդ:

2. Ան զոր ի նախակարգ բանիս նշանակեմք վասն որոյ փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշտոց անուն, ի Տարօնական գաւառէն ի Հացեկաց զեղջէ, որդի անն երանելոյ Վարդան կոչեցելոյ: Անդ:

3. Կանխեմ ասել որ մի գոհացուցիչ եզրակացութեան զալու համար, ուշ դարձուցինք նաև մեր երկու նոյն ժամանակի պատմիչներու գրածներու վերայ, Վագար Փարպեցեոյն և Մովսէսի Խորենացեոյն, որք զժբաղգարար այնքան բան կ'ասեն, ինչ որ գրած է Կորիւն: Եր ուրի տարբերութիւնն յայսմ է որ, Փարպեցին հետեած է Կորիւնին պահելով Մաշտոց անունն, ի բաց անեալ Սահակին վերագրածն և Խորենացու ներմուծուած գլխէն. իսկ Խորենացին մանրամասնութեանց մէջ թեթև շեղումներ ունի, և որ դիտելին է, անտես արած Մաշտոց կոչումն, անոր տեղ գործածուած է Մեսրոպ (կամ Մեսրոպբ). մենք այս վերջին ձևն նախընտիր կը համարինք: Անշուշտ սա ունեւնալու է իւր իրաւացի պատճառք, զոր յետոյ պիտի տեսնենք:

Միջին դարերու զրիչ լինելն՝ երեմիական ոճէն յայտնի է, աւել  
բանաց և արշաւանքներու դարու մարդ է, ինչպէս են մեր Է—Թ դարերու  
ողբերգակ պատմիչներն: Սա ևս անկախ իշխանութեան և ինքնագլուխ  
Աթոռոյ գաղափարն կորուսած, սրտառուչ յիշատակաւ Միածնաէջ  
կաթողիկէին, աչքերն դէպ ի Սիոնն կը դարձունէ, այն Սիոնն զոր  
ողբային Սաղիմայ որդիքն բարեկացուց գետեզերքներու վրայ:

Եօթներորդ դարուն մէջ Հայոց Սիոնն եղաւ Քարուղաշտի Զուարթ-  
նոց Եկեղեցին<sup>1</sup>, որ հայ մտքի մէջ հաւասար էր Սողոմոնեան Տաճա-  
րին, մանաւանդ աւելի իմն գերազանց:

Հուսկ ուրեմն ամեն տարակոյս կը փարատի, ի նկատի առնելով  
որ Կորեան «Մաշտոց» կոչուիմն չունի, այլ իւր յատուկ «Մեսրոփը».  
և ապա նոյն ինքն կ'ուղարկէ զընթերցողն առ Կորիւն<sup>2</sup>, «Կատարեալ  
պատմութիւնն» զայն կոչելով:

Ուզած ենք օգտուիլ նաև Զենոր Գլակէն: Որքան և մեր ողբացեալ  
վաղեմի բարեկամն Գր. Խալաթեան զայս յետին դարերու զործ ցոյց  
տուաւ, սակայն մեզ համար խմբագրութիւնն չէ կարևոր, այլ խմբա-  
գրուածն, որոյ հում նիւթերն կանուխէն կային ցիր և ցան Գլակայ  
Վանքի և այլ վանօրէից, Ծոփաց և այլն, փոշոտ դիւաններու մէջ և  
իններորդ դարու կամ աւելի ուշ խմբագրողն, չմտաբերելով Ի. դարու  
քննադատները, համեմեր է իւր խմբագրութիւնն նաև յետին դարու յի-  
շատակարաններով, որով հեղինակութիւնն նուազած:

Մեզ հետաքրքրողն նախապէս ժամանակագրական կարգն չէ, այլ  
ժամանակագրուածն, իրն և պատմութիւնն, որ կայ և խօսի. անձանօ-  
թին ոչ ոք ցանկայ, եղած է մի պատմութիւն որ և գրուած է. սա-  
կայն պէտք չէ ավշեցնէ մեզի եթէ իւր տեղը չգտնենք. ինչպէս մի  
հոյակապ շինութեան բեկորներ որոնք ազուցուած են մի յետագայ  
շինութեան մէջ, որոց ուսումնասիրութեամբ կարելի է վերականգնել  
հինն, առանց խախտելու կամ արհամարհելու նոր շինուածքն:

Այսչափ են մեր անդրանիկ պատմագիրք, որք չափազանց աղքատ են  
Մեսրոփբայ կենսագրականին նկատմամբ. և եթէ աւանդարար տրուած  
ըրջանակի մէջ մնանք, ոչ մի նորութիւն, ոչ մի լուսարանութիւն չենք  
կարող տալ ընթերցասիրաց, վասն զի անլուծանելի կը մնան այն  
հարցերն որք Ս. Մեսրոփբայ անձնաւորութեան շուրջն կը բոլորին,  
թէ ուստի՞ էր ծագումն, ինչ ազգից և որպիսի՞ ըրջանի մէջ ապրած ի  
մանկութենէն, մինչև նորա երեւոյր Հայաստանի բեմի վրայ իբրև Ու-  
սուցող Հայոց ազգին:

Ս. Մեսրոփբայ նախնիքն գտնելու համար, հարկ համարիմ շօշա-  
փել փոքու իւրք Հայ ազգի ծագումն:

Արեւելասիրաց պատմական հետազոտութիւնը ապացուցած են որ  
նախապատմական ժամանակներ Արեւելէն մի զաղթականութեան հո-

1. Հաւանօրէն կառուցուած էր Անտիոքայ մէջ Կոստանդիանոսի շինել տուած կաթողիկէին  
կամ մի այլ Հռովմէական շիրմի (Mausolée) հետևողութեամբ:

2. Այսպիսիք էին վարք երանելիացն, Ս. Սահակայ և Մեծին Մեսրոփբայ, և այսպիսի  
բաղաբաժանութիւն նոցա, մանաւանդ թէ և առաւել քան զոյն զոր գրեալ է (Կորիւն) ի Կատա-  
րեալ պատմութեան նորա (Սոփ. հա. Ա. 37):

սանք անցաւ տարածուեցաւ, մինչև Եւրոպիոյ արևմտեան սահմաններն<sup>1</sup> :

Սոյն գաղթականութեանց միջոց առանձին ընտանիքներ հաստատուեցան նաև Հայաստանի մէջ: Այս արիական գաղութն, իւր թողած երկրի նմանը գտնելով նոր գաղթավայրում, վերջնոյս սարերն և գետերն տարբեր անունով չպիտի կոչէր, այլ այն ինչ որ սիրելի էր իւր սրտին՝ Մասիսն, Արարատն, Արագածն, Երասիսն, Արածանին և Տիգրիսն և գաւառներն, Տոսրն, Տուրուբերան, Տարօնն և Այրարատեան աշխարհն: Եւ բերէին իրենց հետ նաև պաշտած աստուածն, Արևն և նորա պաշտամունքն. Վահագն՝ կեանք և լոյս, Գեմետր՝ երկրագործութիւն և ոյժ, Գիսանէս բժշկութիւն և բնագիտութիւն, միով բանիւ Մոզաց գիտութիւնն, վարդապետութիւնն և կրօնքն, հաստատելով յԱրմաւիր, յԱշտիշատ, Բագարան և յԱնի ևն: Ս. Գիրքն իբրև հնագոյն պատմական յիշատակարան, Եզրիպտական ամենայն գիտութեանց վարժուած Մովսէսի գրչէն ելած, կը հաւաստէ այս արևելքից եկած գաղթականութեանց որք հաստատուեցան Հայաստանի մէջ<sup>2</sup>: Համաձայն արտաքին և Ս. Գրոց պատմածներուն, ունի նաև մեր Պատմահայրն Խորենացի գրած արևելքէն եկած գաղթականութեանց մասին, յառաջ քան Հայկայ գալուստն<sup>3</sup>: Ուստի՞ գտեր է մեր ձերունին 15 դար առաջ իւր պատմութեան աղբիւրն, յեղեկիմ թէ յԱղեքսանդրիա՝ Բագմավիպէն իբր Համայնագիտական մի մատեանէ, և որոյ պատմուածքն ինքն կը հաստատէ իւր ժամանակի անգիր գրոյցներով, որ աւանդաբար անցեր էին բերնէ բերան, սերունդէ սերունդ, ամեն մի նախարարական ցեղի, տոհմի և տան մէջ:

Խորենացու յարգն ըստ ինքեան պէտք էր արժանապէս գնահատուիլ, երբ մեր օրեր բեռագրոց ընթերցումն ամբողջական պատմութեան ձևով սկսաւ նկարագրել հարաւէն նախապատմական ժողովրդեան մը յառաջ իսողացումն Հայաստանի հողի վրայ, զրեթէ բառացի նոյնութեամբ, ինչ որ արդէն գրած է Խորենացի, որով Հայկ և իւր սերունդն մեկնելով Բարեւոնէ, Տիգրիսի ուղղութեամբ, Սղերզի գետափէն և ձորերէն բարձրանալով՝ Բաղիշու մօտով կ'իջնէ Տարօն և անտի ի Հարք՝ թողլով ի հարաւ զՏարօն: Հայկ և իւր յաջորդներն իսողաղ տիրապետութեամբ բնիկներու վերայ կը տարածուին հաւասարապէս ղէպ ի Վան, մինչև ի Կապադովկիա և Կովկասու սարերու ստորոտներն: Բաց ի թագաւորաց անուններէ, որոշ կերպով կը տեսնուի որ բեռագէտը միշտ աչքերնին Խորենացու վրայ պահեր են աշխարհագրական տեղերու անուններ ընթերցած ժամանակ, և քայլ առ քայլ

1. Կայ միւս ևս կարծիք ոչ անհաւանական, արևմտեան կողմէն մի գաղթականութիւն մտեր է Հայաստան այլևայլ անուան տակ, Թրակեան, Փոնդեան կամ Հաթեան կոչուած:

2. Ամենեքեան սոքա որից յԵկատանայ և եղև բնակութիւն նոցա ի Մասնաց մինչև ի գալ Սովփերայ լեռան Արևելեայց (Մենդ. ժ. 30). Եւ էր ամենայն երկիր լեզու մի և բարբառ մի ամենեցուն. Եւ եղև ի իսողայն նոցա յարեւելից՝ գալին դաշտ մի յերկրին Սենասար և բնակեցան անդ (Մենդ. ժ. Ա. 1, 2):

3. Հայկ... յիշի և աստանոր պատմութիւնս հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ առ երկայնանատու միով լերամբ բնակեալ յառաջագոյն արք սակաւը՝ ինքնակամ հնագանդել ղիւցազննս: Արդարացուցանէ և այս գասացեալ զրոյցս անգիրս:

հետևում են Խորենացու գծած շաւղին: Որքան և փոքր լինի Խորենացու սփռած լոյսն, սակայն չի կորցնէր իւր նշանակութիւնն:

Այսպէս ուրեմն նախապատմական շրջանին պատկանող բնիկներն, որոնք կարող էին պարծիլ իբր անմիջական սերունդ և պայազատներ Նոյի կամ Քսիսութրայ, գրեթէ ամբողջովին գրաւեցին զԲուն Հայաստանը: Այդ բնիկներն երեք զլիսաւոր կեղրոն բռնած էին. Այրարատեան, Բարձր Հայք և Տուրուբերան աշխարհներն: Նախապատիւ էր Այրարատեան Տունն, Երկրորդ տեղին ունէր Բարձր Հայոց Անգեղ Տունն, Երրորդն Տուրուբերանի՝ Աշտիշատու տան ցեղապետն, և երեքն ի միասին Մեծ Հայք կոչուեցան<sup>1</sup>: Նոյ եղաւ առաջին քրմապետն և զոհագործողն, որով իւր որդիք ժառանգեցին այդ պաշտօնն և մի քանի կեղրոններում հաստատած էին իրանց մեհենատեղիքն յԱրմաւիր, ի Բագարան, յԱնի, և ի Տարօն՝ յԱշտիշատ:

Արարատեան գաղութն գերիշխանութիւն բանեցուց միւս տների վրայ և համարուեցաւ կեղրոն ազգային իշխանութեան և միութեան. ուստի Ասորեստանի միապետներու դէմ մղուած կռիւներու մէջ՝ միազըլխապետ կը ներկայանայ Արարատեան աշխարհի իշխանն, որու պարտութեամբ Հայաստան կը դառնայ մի նուաճուած երկիր:

Եւ որքան մեծ է Խորենացու հրճուանքն երբ մեր Պարոյր Նախարարն Վարբակէսի օգնութեամբ, թօթափելով Քաղդէացոց լուծն, անկախ իշխանութիւն մի կը հաստատէ Հայաստանի մէջ<sup>2</sup>:

Պարոյրի յաջորդներն իբրև հարկատու թագաւորներ պայազատեցին մինչև ցՏիգրան Մեծն, որ կիւրոսի շնորհիւ՝ թուի անկախ իշխանութիւն մը ձեռք բերած. նորա օրով երջանիկ եղած է Հայաստան երկիր. Տիգրանը Հայոց Սողոմոնն եղած է: Սա կը թողու երեք որդիք, Բար, Տիրան, Վահագն: Անուններ որոնք նախնարար դիցարմուտքեակ պատկանած են և առարկայ եղած կրօնական պաշտամանց, իբրև Արևի մարմնացումն. յետոյ նաև քրմերու անուններ՝ իբր Արևի պաշտաման նուիրուածներ:

Վահագն քաջագոյնն և ուժեղագոյնն եղբարց մէջ կը յափշտակէ թագաւորական և քրմական<sup>3</sup> գաւազանն իւր եղբայրներէն, բնաջինջ անելով իւր եղբայրների սերունդն, որոյ համար և կոչուած է Վիշապաքաղ<sup>4</sup>, այսինքն թագաւորագարմի սատակիչ:

Վահագն իւր ցեղին սեփականելով թագաւորական և քրմական բարձրագոյն պատիւներն՝ նշանակեց իւր որդիքը իբր քրմապետ զլիսաւոր մեհենատեղեաց վրայ. Բագատ (կամ Բագարատ) Անգեղ տան յԱնի, իսկ Վահէն Տոսպայ և Տուրուբերանի և Տարօնոյ Աշտիշատու մեհենատեղեաց, կրելով միանգամայն թագաւորական թագն, որով

1. Այս սեղմունն չի բացատր մնացած աշխարհներն:

2. Եւ այժմ աճա զուարճացայ ոչ փոքր ինչ կրելով խնդութիւն, հասանելով ի տեղիս մերում իսկ բնիկ նախնոյն, յորում սերունդը թագաւորութեան հասանն յաստիճան (Խոր. Ա. ԻԱ. 99):

3. Քուր-Մական, Սուրբ գաւազան քահանայական կամ աստուածպետական. թէ ոչ հրաշագործ, այլ նոյնքան զօրաւոր որպէս Մովսէսինն:

4. Յետ որոյ և ընդ վիշապաց ասէին յերգն կոռեւ նմա և յաղթել... Խոր. զերթ Ա. զԼ. Ա. Ազաթ. էջ 606:

Աշտիշատն թագաւորաց Հայոց կրօնական պաշտամանց կեդրոն դարձաւ, նսեմացնելով Արմաւիրի և Բագարանի մեհենաններն: Վահէ՛ Դարեհի պարտութենէ յետոյ, կ'ի՛նկնայ Մակեդոնական իշխանութեան ներքև, կորցնելով անկախ թագաւորի թագն և զաւագանն:

Մակեդոնական տիրապետութեան շրջանի մէջ, Հայ իշխաններ իբրև կուսակալներ կառավարեցին զերկիր, որոնք պատկանելով այլ և այլ նախարարական տներու, կը ջանային ապահովել իրենց տան համար իշխանական տիրապետութիւնն, որով Հայաստան շարունակ շփոթից և խռովութեան մէջ էր<sup>1</sup>: Բայց տարակոյս չկայ որ առանձին կերպով հաւաճուած էին թագակապ իշխանագունք Այրարատեան Նախարարութեան, և ազդեցիկներ փախստական գնացեր էին Պարթև թագաւորաց արքունիքն, ուր ապաստան կը գտնէին իբրև առ իւրեանց ցեղակից և կրօնակից Նախապատմական ժամանակներուց:

Խորենացու մթին խօսքերու մէջ դեռ կարելի է բաւական բացորոշ կերպով նշմարել որ Վաղարշակ յառաջ քան Մեծին Արշակայ նշահաւորն և պատերազմն ընդդէմ Մակեդոնացուց, ծառայութեան մէջ էր արդէն ի դրան արքունի<sup>2</sup>, անշուշտ իբր թագակիր իշխան Հայկագուն զարմէ: Սա տեղեակ լինելով Արշակայ աշխարհակալական խորհուրդներուն, ուզած է օգտուիլ, խոստանալով իւր և իւրայոց աջակցութիւնն ի մարտի ընդդէմ Մակեդոնացուց, պայման դնելով անշուշտ Հայաստանի թագաւորութեան վերականգնումն: Վաղարշակ՝ Բագարատ իշխանի հետ, որ թերևս կուսակալութեան պաշտօնով կը տիրէր մի մասին Հայոց, «ի ծայրս հայերէն խօսից», համախորհուրդ եղած է ապստամբութեանն և զհայս անցնելու ի կողմն Պարթևաց: Արշակ Մեծն Վարակէսի խորագիտութեամբ թագ կապէ Վաղարշակին և իրեն սերտ սիրոյն նշան, և կորստըրեան Պատիւով<sup>3</sup> փոխէ անունն ի Վաղարշակ (Բահլ-Արշակ) խառնելով իբր յիւր ազգակցութիւն: Իսկ Բագարատին՝ իշ

1. Յայմաճեա՛տ մինչև ցթագաւորութիւն Վաղարշակայ ի Հայս՝ ոչինչ ճշմարտագոյն ու նիմ պատմել քեզ. քանզի շփոթ իմն ամբոխից լեալ, այր զարամբ ելանէին տիրել աշխարհիս. (Խոր. Ա. 1. Ա. 127):

2. [Քանզի այս Բագարատ նախածեան ընծայ ըստ կամաց մատոյց զինքն Վաղարշակայ յառաջ քան զպատերազմն Արշակայ ընդ Մակեդոնացիս և սա ի դրան արքունի]: Իսկ ի ծայրս հայերէն խօսից կողմնակալ իշխան բիւրուց և հազարաց յարեմտից կուսէ: (Խոր. գրքը Գ. Գ. Գ.) Գիտել կուտանք որ այս պարբերութիւնը իբր փակագծի [] մէջ ասուած ծանօթութիւն է. մինչդեռ «Իսկ ի ծայրս» պէտք է համարել շարունակութիւն «որ և այժմ մեծ նախարարութիւն ի մէջ աշխարհիս» յի կայն. որ ճշդիւ Բագարատունեաց յանձնուած էր Արշակունի թագաւորներէն: «Սա» չի կարող վերաբերիլ առ Բագարատ քանզի Վաղարշակի կուս սկսած ժամանակ նա դեռ Մակեդոնացուց իշխանութեան տակն էր: Ամբողջական իմաստն կը պահանջէ «և»ը ուղղել «էր»:

3. Վասն բնութեան եղբայրութեան ազգատոհմին... քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին և կողբայրութեանմ (Ազաթ. էջ 31-32) որպէս թէ ըստ մտաց Հոռոմեական ազատարելոց, որք նոյն իշխանի ազգատոհմի անուամբ կը կոչուէին - Այսպէս նաև Հայկագունի իշխանն կը կոչուի Արշակունի: Արշակունի կոչումն յատկապէս չի նշանակեր նաև ցեղի մը արեւակցութիւնն, այլ իբր մակղիւր մը որ կարելի է ներքին զեղչել կամ ընդարձակել: Այս մտքով Ս. Սահակ Հրաշառ Կամարականի որդւոյ համար միջնորդելով Վասմէն կը ինդրէ, եթէ չկամին արշակունի անունը տալ, գտնէ միւս նախարարներու կարգն անցնի: «Եւ միւս ևս զի դարձուցէ զտուն ազգականին իմոյ և ըր, զմանկանն Գագաւունի զորդոյն Հրաշատայ թէ և ոչ յիւրում հտեղ» (վարչակրօնիմ յաւազելով անուն, զէթ ի կարգ ընկեցեալ՝ ընդ այլ նախարարսն թուեցի) (Խոր. գրքը Գ. Գ. Կ. Ե.): Նոյնպէս Արտաշէր Պարթևի մեր Արտաշէս վերջնոյն անունն ևս կը փոխէ Արտաշէր իբրև սիրոյ նշան: (Խորենացի Անդ):

խանին Անգեղ Տան, խոստանան կարգել Առաջին իշխան Հայոց և Մալխազ<sup>1</sup> և ընդ նմին տան թագադիր Ասպետ լինելու աստիճանն և պատիւն<sup>2</sup>, այնպիսի արտօնութեամբ որ ոչ ոք Արշակունի օրինաւոր թագաւոր համարուի առանց ազգին Բագրատունեաց:

Այսպիսի պայմանագրութիւն եղած լինելու է Արշակայ արքունիքում, որով տուած է իւր իշխանութեամբն ոյժ և հաստատարիւն երկու իշխանների մէջ կռած դաշինն. ապա թէ ոչ անհասկանալի կը մնայ թէ ինչպէս Վաղարշակ քան զիւր իշխանութիւնն անելի բարձր իրաւունք և իշխանութիւն կրնար շնորհել Բագրատունի Ասպետին, այսինքն առանց անոր հաւանութեան օրինաւոր թագաւոր չճանչցուի Հայոց<sup>3</sup>:

Եթէ Այրարատեան Արշակունիք, չլինէին Հայկական զարմէ և ի նախնեաց որդւոց որդի տիրապետող և ապա թագակիր իշխաններ Հայաստանի, յառջ քան Մակեդոնացւոց տիրապետութիւնն, մեր չորրորդ և հինգերորդ դարու պատմագիրքք, ամեն մի արշակունի յիշելիս, չէին ասեր — Բնիկ, քնակ, ի բուն, ի բնմե և այլն տերակց, արակց Տանն Արշակունեաց: Վերջին կոչումովս թագաւորական պատուոյ հետ կ'իմանային նաև ի զարմից հայկազանց լինելն, նա մանաւանդ որ Խորենացի յիշելով յառջագոյն բնակուած լինելը Հայաստանի, Հայկայ համար կը գրէ. «Բնկին մերոյ նախնոյն Հայկայ<sup>4</sup>»:

Նմանապէս Վաղարշակայ արտաքոյ կարգի ուշադրութիւնն առ Բագրատունիս, կը յայտնէ նախ այդ ցեղի ունեցած ոյժն և հեղինակութիւնն երկրի մէջ, երկրորդ ազգակցական կապն՝ որով Բագրատ, մինչ Վաղարշակ Արշակայ մեծի արքունիքումն էր, յառջ քան ապստամբութիւնն, կը կանխէ յառջագոյն անձնատուր կը լինի թագաւորեցնելու զՎաղարշակ որ թագաւորական տան ուղիղ գծից իջած էր<sup>5</sup>:

Այսպէս ուրեմն Խորենացու Պատմութիւնն առած յանգիր Զրոյցներէ, և յերգոց Վիպասանաց և ի Թուռլեաց<sup>6</sup> և յազգային դիւանաց, ուր՝ ասէ Պատմահայրն «ամբաւ զրուցաց զոն մատենանք» որպէս և հատակոտորք Անանուն զրբին, կու գան հաստատելու Արշակունեաց, Բագրատունեաց և Վահունեաց մի և նոյն արմատէն բղխած երեք մեծամեծ ճիւղեր լինելը, որոնք ուղիղ գծով կ'իջնեն Վահագնի որդիքներից, սոքա իրանց մէջ բաժանեցին արքայական թագն, Քրմական մականն և Հայրութիւն, այսինքն թագակապ ասպետութիւնն<sup>7</sup>:

1. Թուի այս բառի զենտէ Մալէ-Խիզամ իբր Տուն աղջկանց (?) կամ Ներբրնապետ. Մարդպետ:

2. Ըստ Գահնամակի Ս. Սահակայ:

3. Որ թագաւորն թագակապն լեալ էին ի բնմէ ազգին թագաւորութեանն Արշակունեաց, (Բուգ. Կպ. Կ. զԼ. ԽԳ):

4. Սքանչելի իմն ասէ պատմագիրն թէ ի յովով տեղիս զտան բնակեալ ի մարդկանէ յերկրիս մերում ցան և ցիր սակաւք յառջ քան զգալուստ բնկին մերոյ նախնոյն Հայկայ. (Խոր. Ա. ԺԲ. 62):

5. Եւ զհոջեցեալն Բագրատ... վասն յառաջագոյն անձնատուր ձեւնտուութեան առ թագաւորն... զյառաջասացեալ Տանուէրական պատիւն ազգին պարգեւելով: (Խոր. Բ. 156):

6. Զրոյց - Légendes - Երգ վիպասանական Poème Epique - Երգ Թուռլեաց Poésie Didactique.

7. Այսուհետև մեզի դիւրին պիտի լինի հասկանալ այն ծածկեալ պատճառն, որով Քրմատունեական շրջանի մէջ թագաւորական Տունն և Քահանայապետականն համապատիւ համարուած էին և սերտ կապով միացած և նոր ինամութեամբ կ'ամրապնդէին զայն:

Վաղարշակ՝ Բագարատ իշխանի աջակցութեամբ վերականգնելով հայկական թագաւորութիւնը, բնական է որ առաջին մտածութիւնն պիտի լինէր բարեկարգելու գերկիրն և վերանորոգել առաջին կարգերն՝ որոնք խախտած էին Մակեդոնական տիրապետութեան ժամանակ: Բարեկարգութեանց սկիզբն եղաւ Նախարարական տներու իրենց բնական կարգին վերածելն, որ բարձր կոչուէր, երբ ըստ աւագութեան և ազնուութեան թագաւորի տաճարին մէջ բազմէին իւրաքանչիւրն յիւր տեղին կամ ի բարձին: Կը տեսնենք որ նախապատուութիւնն կը ստանան այն տներն որոնք ուղղակի Հայկայ սերունդ ճանաչուած են, որպէս Բագրատունին, Սիսակեանն, Խորխոռունին, Մանաւագեանն, (Մուրացանն) և այլն. բայց Վաղարշակին մերձաւորագոյն էին Վահագնի սերունդէն իջած տներն: Սորա ոչ միայն Աւագ կոչուած Նախարարներու կարգն կը մտնեն, այլ Վաղարշակ աւելի իմն ուզելով պատուել զիւր ազգակիցներն, անոնց կը պարգևէ Քրմապետութիւնն<sup>1</sup>, և անուն կոչէ Վահագնի:

Հ. Գ. Վ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Շարաշարեյի

1. Բայց յորդոցն Վահագնի զտեալ արս, որք ինքնակամ ինչորեցին զմեհնից պաշտամունս, պատուէ մեծապէս, ի ծեռն Ոոցա տալով զքրմութիւնն, և կարգէ ընդ առաջին Նախարարութիւնսն. (Խոր. Բ. զԼ. Բ. 172):

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ՝  
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ  
ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ

Քառասնորդական պահքը եւ Աւագ շաբաթը

Քառասուն օրուան մեծ պահքի մը յիշատակութիւնը առաջին անգամ ունինք Նիկիոյ ժողովքին (325) հինգերորդ կանոնին մէջ: Այս մեծ կոչումը՝ երկար տևողութեան և Զատիկի պատրաստութիւն մ'ըլլալուն համար էր: Որքան որ ժողովքին այս յիշատակութիւնը հնուցիւն մը կու տայ այդ պահքին, սակայն եկեղեցիէ եկեղեցի պահքի օրերու սահմանը կը տարբերէր. ոմանք մէկ կամ երկու օր կը պահէին, այլք քառասուն ժամ, սովորա-

բար Զատիկի նախընթաց չորեքշաբթիէն կը սկսէին:

Կ'երևի որ Հայոց մէջ կանուխէն մտած է քառասնորդական պահքը առնուաբար խիստ օրէնքներովը, որովհետև Գրոց գիւտին հետ Ս. Մեսրոպ պամէնօրեայ Հարցերը կու տար Հայ եկեղեցւոյ որ իւր փրկագործութեան յիշատակը կը տօնախմբէր խորայլեան երեք մակնակց հնոցիկ վերջը շումով: Հրէական ազդեցութեան վերջին հետքերն էին Եկեղեցւոյ մէջ, որ հնոցին նման երթալով կը մարէր փրկագործութեան օրերուն մօտենալովը:

Եւ անա Աւագ շաբաթը գրական արժանիքով էջ մը կը բանայ մեր առջև: Երգեր՝ ուր հակադրութիւնը յօրինուածութեան հոգին կը կազմէ, գաղափարներու վեհութիւնը՝ բանաստեղծական նուրբ թրւիչքներով կ'արտայայտուին... Աստուածային ողբերգութեան մը ցուցադրութիւնն է, ամենայաջող արտայայտութիւն մարդ-

1. Տես Բագմավէպ 1913, էջ 417.

1843 ԲԱԶՄԱՎԷՊ 1914

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

ՀԱՏՈՐ  
ՀԲ  
ՓԵՏՐՈՍԱՐ  
Թ. 2

ԱԶԳԱՅԻՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ  
ԱՄՈՒԹԵՐԹ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն


ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՎԲԱՅ ՎԱՐՈՒՑ

ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՑ ԳԻՒՏԻՆ \*

Վահունիք նախապատմական ժամանակներուց սեփականեր էին իրենց Տարօնոյ գաւառն: Ըստ Պատմաճօրն մեր բնիկ նախարարական ցեղէն Վահագնի որդիք ժառանգեցին Տարօնը, և հաստատեցին իրենց կրօնական պաշտամանց կեդրոնն յԱշտիշատ, և այն մեհեանքն և տեղիքն սեփականութիւն էին թագաւորացն Հայոց<sup>1</sup>: Վահագն իջեր էր յերկնից և անցեր էր ի շարս աստուածոց և ունէր իւր պաշտամունքն Աշտիշատու մէջ: Արտաշէս Ա. բարեացակամ առ իւր ազգայինս, Հերակլի քաջագործութիւնք նմանեցնելով իրենց Վահագնին, Երակլի պատկերն կը դրկէ ի Հայս, որպէս զի յաշտից տեղիս զրուի: Սակայն Տիգրանի կեղծ ցասումն ընդ յառաջադիմութիւն և ազդեցութիւն Վահունեաց ազգին, բաւական եղաւ, Վաղարշակէն մեծապէս պատուած քրքումական պաշտօնով, ընկենուլ Վահունիքը իրենց Տանուտրական Պա-

\* Տես Բազմավէպ 1914 թիւ 1 էջ 1.

1. Ապա հրաման տայր (տորով)... յեթն բազինս մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կոոց զիցն պաշտաման: Ապիտակ ցլուք և սպիտակ նոխագօր... զիւր ազգին արշակունեաց զհայրենեացն պաշտամանց տեղիսն մեծարէր... Ազաթ. էջ 33-34. (Արմաւիր-Բագարան, Անի, Թիւ, Թորգան, Երէզ, Բագայաւինջ) Քոյ զայս եօթն՝ էր մի ուրիշ Ութիրորգ՝ Յաշտից տեղիքն: Եւ իբրև եկն եհաս ի Սահման Հայոց, լուաւ Գրիգորիոս... Եւ Վահագնեան մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ... ութնրորդ պաշտօնն հարկով իրենցն: Եւ Վահագնի պաշտօնը Վահագնի, յաշտից տեղիք (Աշտիշատն) թագաւորացն Հայոց Յազնայր Սեպուհ. ԱՅՅՈԿ.



տուէն և Քրմութենէն և անոնց սեփական գիւղն Աշտիշատն գրաւել յարքունիս<sup>1</sup>. Ինչո՞ւ. որովհետեւ համարձակեր էին ինքնազուլիս Երակլի պատկերն, իբրև իրենց Վահագնին, կանգնել յաշտից տեղիս: Սակայն իսկական պատճառն այլ էր:

Արշակունի թագաւորներու երակներու մէջ, իբրև Վահագնի սերունդ, հաւասարապէս քրմական արիւնն ծնունդէ ծնունդ կ'անցնէր յաջորդաբար: Տիգրանի աշխարհակալական յաջողութիւնք ծնուցին նորա մտքի մէջ միապետական տենչն, և այդ գաղափարին համեմուտ համար, հարկ համարեցաւ միացնել իւր անձի վրայ թագաւորականի հետ նաև Քրմապետական մականն, ըստ օրինակի Հռովմէական կայսերաց: Ուստի Տիգրան թագաւորութեան սկիզբէն իբր իւր կրօնասիրութեան ապացոյց «առաջին գործ զմեհնանան շինել կամեցաւ<sup>2</sup>»: Կապաղովկիայէն եկած քուրմերն, չուզելով վիրաւորել իրենց ազգայիններն, ըղձութիւն պատճառեցին, և բերուած անդրիբք իրենց ուզած մեհնատեղիքն զետեղեցին յԱնի, ի Թիլ, և յԵրիզա: Իսկ Վահունիք չկասկածելով իրենց ազգակցի բարեացակամութեան վրայ, զոր վայելեր էին Վաղարշակի և Արտաշէսի ժամանակ, զո՞հ գնացին Տիգրանի նախանձուն և ազգակործան ատելութեան. որով ոչ միայն ստացուած քնին գրաւուեցան յարքունիս, այլ և կորուսին Տանուտէրական պատին կամ բարձն, և ինկան փոքր կամ կրտսեր նախարարութեանց կարգն. որք վայելէին միայն ազնուականութեան մենաշնորհն, աւելի իբր տխուր մը քան իրաւունք և իշխանութիւն. ուստի յայնմհետէ Վահունեաց Աշտիշատու տունն անպաշտօն պիտի կոչուէին «Կարճագատք». հազուազիւս բառ մը որ շատ խորհուրդներ կը բովանդակէ իւր մէջ<sup>3</sup>:

Արշակունի թագաւորներ սիրեցին զքրմութիւնն և ուզեցին զուզել իրենց տան և ազգի վերայ: Երուանդ արշակունին իւր տանը աւելի փայլ մը տալու համար, հնաւանդ Արմաւիրն անշքացնելով, Բագարան կը հիմնէ և հոն իւր եղբայրն Երուազ քրմապետ կը կարգէ: Երուանդ այս տեղափոխութեամբ ուզեց հարուածել ուղիղ գծով իջած բնիկ հայկական հարստութիւնն և ընդհակառակն ընտելացնել իւր տան հետ Հայոց ժողովուրդն, որ սիրահար իւր վաղնջական տօնախմբութեանց, աշխարհօրէն բազմութեամբ կը թափէին ուխտագնացութեամբ զլիւսաւոր մեհնատեղիքն<sup>4</sup>:

1. Յատուցեալ ընդ վահունիս, թէ ընդէ՞ր յիւրեանց սեփականին իշխեցին կանգնել զպատկերն Երակլի, առաքեալ ի նորին հօրէ, ընկենու զնոսա ի քրմութենէն և զգիւղն յարքունիս անուռ, յորում պատկերքն կանգնեցան» (Խոր. Բ. Ժ.Վ. 188).

2. Խոր. Բ. Ժ.Վ. 188.

3. Տիգրան նոյնպիսի անգթութեամբ վարուեցաւ նաև Մուրացան ազգի հետ, զոր Վաղարշակ կողմնակալ կարգեր էր «զգեղեր հայկական խօսից», Սիսակեան և Կաղմեան աներու սահմանակից՝ հանելով յԱրկորդական գահն: Մեզ չի թուիր որ սոքա Մարաց կամ Մեղաց ազգէն լինէին. այլ իրենց զինանշանի պատճառաւ կոչուած են Մարաց Տէր, Վիշապազունք՝ որոց ընդդէմ կոտած է Վահագն, ինչպէս ասացինք, իբրև իրեն ազգակցաց և թագաւորազարմից, Նոյն աւրիւնն է որ կը սոցայ Տիգրանայ երակներուն մէջ. սոքա անշուշտ Վահունեաց իրաւագրկութեան պաշտպան կալով իրենք ևս զո՞հ գնացեր են անոր փառասիրութեան: Նոյն բանն կրկնուած է նաև Արտաշէս Բի ժամանակ, Արտաւազդի զրգութեամբ և Սաթինկայ հրապուրանքով:

4. Բայց Երուանդ շինեալ զքաղաքն իւր, և փոխեալ անոր զամենայն ինչ յԱրմաւրայ ուրոյն ի կտցն... զի մի՞ ի գալն և զոհել անդ աշխարհի, ոչ զգուշութեամբ պահեցի քաղաքն (Խոր. Բ. Խ.).

Իսկ Արտաշէս Բ. դեռ աւելի առաջ կ'երթայ: Երուանդին յաղթելով և Երուազին սպաննելով, ասոր յաջորդ կը կարգէ իւր ընտանի կամ ազգակիցներէն մին, Մոզպաշտե՛<sup>1</sup> տիտղոս մ'աւելցնելով վրան, ըստ օրինակի Հռովմէական Pontifex Maximusի. որ Հռովմէական կրթութեան հետեանք մ'էր, լինելով մին անշուշտ այն թագաւորազուններէն որոնք կամ իրրեւ պատանդ, և կամ յօժարակամ կը զրկուէին Հռովմ քաղաքակրթութեւ, ինչպէս շատ անգամ կը յիշատակէ Տակիտոս իր Տարեգրութեանց մէջ՝<sup>2</sup>: Այս չափով չբաւականանալով, արքունական գաւառներու գլխաւոր մեհենատեղւոյն վրայ, որ էր Անի, քրմապետ կ'անուանէ զիւր որդին Մաժան: Ոչ միայն Անի, այլ և Թիւլ, Էրիզայ և Բագայառինջ կամ Բագաւան, Մաժանի իրաւասութեան տակն էին, ուր ըստ հռովմէական ճոխութեան թաղուած էր դամբարանի մէջ: Տիգրան Գ. իւր եղբոր և քրմապետի շիրմին վրայ կը կանգնէ բազին՝<sup>3</sup>, (Սրբավայր), և այսպէս զեղբայրն ի կարգս աստուածոց կ'ամբառնայ, ինչպէս արած էին Հռովմէական կայսերք սկսեալ Աւգոստոսէն՝ որուն զանազան բազիններ կանգնեցին Սպանիոյ, Գաղղիոյ և Փոքր Ասիոյ քաղաքներէն ոմանք:

Ապա Վաղարշ նոյն տեղւոյ մէջ, Հայոց Նոր Տարւոյ սկիզբն կարգեց տօն աշխարհախումբ ի մուտս Նաւասարդին, որ էր սիրելի և աւանդական տօն մի Հայաստան աշխարհի. աշխարհախումբ բազմութիւնն հիւրասիրութիւն զանելով և զոհերէն վայելելով, ուխտաւորներն, եկող գնացողներ, զեղեցիկ տպաւորութեան տակ կը վերագառնային իրենց տներ. այսպէս այդ քրմաց և քրմապետաց համբաւն կը տարածուէր Հայաստանի չորս կողմերն՝<sup>4</sup>:

Տարակոյս չկայ որ Խոսրով նոյնպէս շարունակեց կրել քրմութեան պատիւն, և ինքն է որ կը հրամայէ եօթն բազիններու վրայ զոհեր մատուցուին աստուածոց շքեղ հանդիսաւորութեամբ, որ ճշգրտիւ կը յիշեցնէ Հռովմէական յաղթանակներու և զոհագործութեանց տօնախմբութիւնքն՝<sup>5</sup>: Ինքն է որ նաև բաժին կը հանէ յաւարէն և մեծամեծ պարգևներ կը շնորհէ քուրմերուն, իրրեւ ենթապաշտօնէից՝<sup>6</sup>:

Խոսրովու եղբրական մահուամբ զոգցես Արշակունեաց համար կորսուած էր արքայական թագն և քրմական մականն. սակայն Սասանեանն Արտաշիր, հակառակ մեր ակնկալութեան մարդասէր վարմունք

1. Է. ի տեղի նորա ի վերայ բազնացն (Բագարանի) կացուցանէ զըմտամի Արտաշիսի, աշակերտ մոզի ուրումն երագահանի, որ սոյն սակ և Մոզպաշտե՛ անուն կարդային (Խոր. Բ. ԽԸ):

2. Տակիտոս-Տարեգրութիւնք. գիրք Բ. գլ. 2. գիրք ԺԲ. գլ. 10, 11. — Brotier յաւելուած. գիրք ԺԵ. — Garnier-Frères au Palais Royal 215.

3. Վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուեալ զգերզման եղբորն իւրոյ Մաժանայ քրմապետի ի Բազնացն աւանի, որ ի Բագրեանդ գաւառի, բազին ի վերայ զերեզմանին շինեալ զի ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեացն և ընդունիցին հիւրք երեկօթիւք: (Խոր. Բ. ԿԶ):

4. Նոյնն շարունակուեցաւ քրիստոնէական շրջանի մէջ աւելի ինն շքեղութեամբ, նոր կրօնքի հիմնադիրներու ներկայութեամբը, որպէս յիշէ Բուզանդ, ուր հանդիպեցան իրարու Տրդատ և Գրիգոր յետ ձեռնադրութեան դռնալով կեսարիայէն:

5. Ապա հրաման տայր . . . . . յեւթն բազինս մեհենիցն ուխտաւոր լինել պատկերաց կոոց զիցն պաշտաման. սպիտակ ցլուք և սպիտակ նոխազօք. . . . . ոսկեղէն և արծաթեղէն զարդուք ի վերջաւորս փողփողեալս կայլն. . . . . (Ագաթ. էջ 33-34 Վենետիկ 1862):

6. Նաև հինգերորդ ևս հանէր յամենայն մեծամեծ աւարացն անկուց, և մեծամեծ պարգևս քրմացն շնորհէր: (Ագաթ. էջ 34):

մ'ունեցաւ Հայաստանի և Արշակունի տանը հետ, որով ուզեց քաւել գործուած եղեռն և հայր լինել աշխարհին: Խորենացի կը պատմէ որ Արտաշէր Պարսիկն գեղեցկապէս կարգի դրաւ Հայոց աշխարհքը և թագէն ու Այրարատի բնակութենէն զրկուած Արշակունիքն կը վերադարձընէ նոյն տեղերը, եկամուտ և ոռճիկ կը կապէ ինչպէս որ էր յառաջն, և մեհենից պաշտամունքն ևս աւելի կը ճոխացնէ: Բագաւանի մէջ Որմզդական<sup>1</sup> հուրն կը հրամայէ անշէջ պահել: Անշուշտ անոր համար որ Մածանի գերեզմանն հոն էր և Վաղարշ աշխարհախումբ տօն հաստատեր էր իբր համապատասխան Պարսից կրօնքին:

Քրմական պաշտամունքն և պատիւն այնքան բնական դարձած էր Արշակունի ցեղին մէջ, որ Արտաշէր և ոչ վայրկեան մը կը վարանի իւր ոխերիմ թշնամիքը վերահաստատել իրենց նախկին տեղերն մտիւք և ոռճիօք: Ասով Արտաշէր ուզեց սիրաշահել զԱրշակունիս, անով ձգել առ ինքն զՀայս և ապահովել իւր տիրապետութիւնը Հայաստանի վրայ, և ամուր պարիսպ մը կանգնել Հոովմէացոց դէմ, և չսխալեցաւ: Սեպտիմիոս Սեւրոսի և Խոսրովու պարտումէն յետոյ, Հայաստան մօտ քառասուն տարի մնաց Պարսից գերիշխանութեան տակ մինչև որ Գիոկղետիանոսի և Գաղերիոսի երկու բանակներն վերջնական յաղթութիւն տանելով, Գիոկղետիանոս զՀոովմայ պաշտպանեալն Տրդատ, որդին Խոսրովու, Հայոց թագաւոր պսակեց: Տրդատ սնած և մեծացած հոովմէական ոգով, վեհապետական շքեղ պատիւներն իւր վրայ ամփոփելու և ոչ մի վայրկեան վարանած լինելու չէ: Հայրենի գահու հետ ժառանգեց նաև Քրմապետական պաշտօնն, և առաջին տարիէն սկսած Անահտայ մեհենատեղիք կը ղեկերի զոհեր մատուցանելու<sup>2</sup>: Եւ ահա այդտեղ երևան կ'ելլէ Գրիգորի քրիստոնէութիւնն և կը սկսի ծագիլ Հայաստանի քրիստոնէութեան արշալոյսն:

\*  
\* \* \*

Գրիգոր Լուսաւորչի ազգաբանութեան մասին առաջին գրողն է Ագաթանգեղոս, յաջողակ քարտուղար Տրդատայ, կը յիշէ զԱնակ հայրն և ապա եղբրական սպանումն Խոսրովի՝ Անակայ ձեռքով, սորա տոհմի ջնջումն և դայեկաց ձեռքով Գրիգորի գողացումն և ի Կեսարիա փախուստն: Իսկ Խորենացին այսքանով չբաւականանալով, հարկ կը համարի երկար ցեղաբանութիւն մ'անել, որով Գրիգորի նախնիքն կը լինին Արշակունի զարմով<sup>3</sup>: Անակայ արշակունի լինելն հաւաստի կարելի է համարել, բայց թէ նա եղան է Նահապետ Պարսկաստանի թագաւորոջ ցեղին, որ Արշակ մեծէն կ'իջնէր մինչև Արտաւան Արշակունի, կը մնայ տարակուսական: Քանզի անիմանալի է թէ ինչո՞ւ մինչ Խոս-

1. Ի Մհրական մեհենն անուանեալ որդւոյն Արամզդայ: (Ագաթ. էջ 593. Վենետիկ 1862).

2. Յառաջին ամի Տրդատայ արքայութեանն Հայոց մեծաց, խաղացին եկին հասին յԵկեղեցայ գաւառ, ի գիւղն Երիզա, ի մեհենն Անահտական, զի անդ զոհս մատուցեցին: (Ագաթան. էջ 49).

3. Յոր հրապուրեալ Անակայ, որ էր ի ցեղէն Սուրենեան Պաշլաւէ, յանձն առնու սպանանել զԽոսրով: (Խոր. Բ. գլ. 2Դ).

րով, Արտաւանայ մահու վրէժն լուծելու համար, և վերստին ի գահ հանելու իւր «ազգակիցներն» հրաւէր կ'ուղարկէ Անակին և միւս երկու տուներուն միանալ իրեն հետ կոռուելու Արտաշէրի դէմ, մերժումն կը ստանայ, մինչ նոքա աւելի յարեալ են սրտի մտօք Սասանականի տէրութեան<sup>1</sup>։ Իսկ ընդ հակառակն սիրով կ'ընդգրկէ Արտաշէրի առաջարկն դաւով սպանանել Խոսրովը, անհամեմատ աւելի նուազ վարձատրութեան մը համար։ Փոխանակ ամբողջական երկրի տիրապետութեան և թագաւորութեան, գոհ կը լինի վարձատրութեամբ Երկրորդական գահին և սեփական գաւառին։ Սակայն Անակ ըմբռնած լինելու էր որ ակընյայտնի և անվրէպ մահուան կը դիմէր, իւր ազգի և տոհմի բնաջինջ լինելուն ստուգութեամբ։ Այսքան անմիտ եղած լինելու չէ, այնքան յանգուգն և վտանգաւոր գործի ձեռք զարնողն։ Ինչո՞վ բացատրել այս մութ պատմութիւնն։ Մենք մեր առանձին տեսութիւնն բացատրելու համար, հարկ կը համարիմք վերադառնալ բնիկ հայկական Արշակունի տան պատմութեան և անոր առաջնորդութեամբ հետազօտել Անակի ծննդարանութիւնն։ Ասոր համար պէտք է Վահունեաց ցեղի պատմութիւնը երկրորդել։ Խնդրոյ հանգոյցն անոր մէջ թաղուած է։

Վահագնի սերունդէն իջած Վահունեաց տոհմն, որոց սեփականութիւնն էր Տարօն և քրմական պաշտօնն, սկսել էին այն դերը խաղալ Հայաստանի մէջ, ինչ որ ունեցան եգիպտական քրմերն, որք անվիճելի գերակշռութիւն մը ձեռք բերած էին երկրի քաղաքական վարչութեան մէջ։ Հայաստանի ամենալաւ գաւառներն այդ ցեղի ժառանգութիւնն էին և սեփականեր էին գլխաւոր ութ մեհենատեղիք, Արմաւիր, Աշտիշատ, Բագաւան, Երէզ և Անի և այլն. ուր աշխարհախումբ տօներուն կը հաւաքուէր ստուար բազմութիւն ուխտաւորաց, որոնք կրօնական երկիւղածութեան և պատկառոտ հպատակութեան հետ, ի դարձին կը տանէին իրենց տներն Վահունեաց փառքի և իշխանութեան տպաւորութիւնը։

Նախկին Արշակունի թագաւորներ, ազգակցական զգացմունքներու թարմութեամբ, շատ համերաշխ ապրեցան քրմական դասակարգի հետ, և մեծ նշանակութիւն կու տային անոնց գործելակերպին։ Կարևոր դիրք մը կը ստանան երբ Արտաշէսի ժամանակ կոոց արձաններ բերում են Յունաստանէն. Վահունիք ըստ կամս անոնց տեղն և պաշտամունքը կը սահմանեն։ Սակայն այդ պերճութիւնն և խրոխտանքը զրգոեց զՏիգրան միջին, պատրուակ բռնելով Հերակլի արձանը, որ Վահունիք նմանցնելով իրենց Վահագնին, կանգնել էին իրենց սեփական գիւղում, պաշտօնընկէց արաւ գիրենք, որի հետ ասացինք, կորուսին նաև Տանու տէրական պատին, որով և գիւղերը յարքունիս գրաւեց Տիգրան։

Արդ մի մեծ Նախարարական թագադիր զարմէ տուն, այսպէս յանիրաւի ինկնալով իւր պատուէն և ստացուածքէն, կարո՞ղ էր հաշտ աչքով նայել Արշակունի տան վրայ, թէ և ազգաւ մի և նոյն ծագումէն սերած լինին։ Յայտնի է եղբայրական թշնամութիւնն աւելի խիստ է իւր ազ-

6. Չի Քէպտ և էր ինքն (Խոսրով) ի մեծի արամութեան վասն բնութեան եղբայրութեան ազգատոհմին, զի հնագանդեցան ի ծառայութիւն մտին համբարձելոյ թագաւորութեան Առաւրազոյն և ընդ նմի միամտեցան։ (Ազաթ. 32. Վենետ. 1862)։

զականի հետ քան օտարին, ուստի երբէք Վահունեաց ցեղն կարո՞ղ էր մտանալ այդ անարգանքն, ստորացումն, ազատ և տանուտէրական իշխանութենէն ինկնալն ի շարս սոսկականաց և ի հեճուկս կրել նախատական տիտղոս մը «Կարճագատը»: Յարմար առթի կը սպասէին վրէժը հանելու և շատ չ'ուշացաւ: Հոռովէական և Խոսրովու բանակներ բնաջինջ եղեր էին պարսկական կռուի մէջ, Արտաշէր յաղթանակաւ կ'արշաւէ Հայաստան: Խոսրովու զիբքը այլ ևս խախտեր էր, չէր այլ ևս այն հզօր թագաւորը, որ Ազաթանգեղոսի ասելով տասը ձիգ տարիներ Արտաշէրը մինչև Հնդկաստան փախուցեր էր. Հոռովմայեցիք և դաշնակից ազգեր թողեր էին զինքը մինակ. ուստի եթէ յաջողէր զնա բռնալ մէջտեղէն, անարգել կը տիրէր Հայաստանի, առանց մի կաթիլ արիւն թափելու. քանզի Արտաշէրի թշնամութիւնն Հայոց դէմ չէր՝ այլ Հոռովմայեցւոց. ուստի նպատակ դրած էր սիրով նուաճել զՀայս քան բռնութեամբ: Ահա այս պարագային Արշաւեր կարող եղաւ երկրորդական զահու և սեփական զաւառի խոստմամբ զբաւել առ ինքն զԱնակ, Կարճագատաց Նահապետն, և անով իբրև մերձաւորի Խոսրովու՝ դաւաճանութեամբ յաջողցուց սպանութիւնն և Հայաստան մտնելով, «գեղեցկապէս կը յարգարէ զայն՝»:

Եթէ Անակ, ինչպէս կը պատմէ Ազաթանգեղոս, մի եկուր էր, նորա ազգատոհմն կոտորելու ժամանակ անկարելի էր երկու մակկուր՝ ազատել և փախուցանել մին Պարսկաստան, միւսն ի կողմանս Յունաց: Քանզի այսպիսի աղիտաւոր զէպքէր երբ հանդիպեր են Հայոց արքունիքում, կոտորածից մի կամ երկու մանուկ ազատողներն եղած են մեծամեծ Նախարարներ և սպարապետներ, ինչպէս կը պատմէ Բուզանդ<sup>3</sup>, և ոչ թէ դայեկներ, օտար և անծանօթ երկրի մէջ, թագաւորասպանի զաւակներ կարողանային փախուցանել և ազատել. զրչով կարելի բան է, բայց ոչ իրականութեամբ. անոր համար մեզ կը թուի որ Անակ Վահունեաց ցեղի մի Նահապետ եղած է, որ կանխաւ խոսոված Խոսրովէն գնացեր էր առ Արտաշէր, և ապա Խոսրովու պարտութենէն յետոյ, նա կը խոստանայ Տիգրանէն յափշտակուած երկրորդական զահն, որ էր Քրմապետութիւնն և իւր սեփական Տարօնն և Աշտիշտան վերադարձնել, եթէ յաջողէր սպաննել զԽոսրով. զոր յանձն կ'առնու Անակ թէ՛ վրէժ լուծելու և թէ վերականգնելու իւր Տունն: Ազաթանգեղոսի պատմածն այնքան մեզի անբնական եկած էր որ ի սկզբանէ կասկած յարուցեր էր թէ մի ինչ որ եկող անկարելի էր որ կարողանար դաւաճանել թագաւորին, եթէ Անակ մտերիմ ազգական եղած չլինէր Խոսրովու, որ անկասկած և միայնակ կը ֆնայ թագաւորի մօտ: Եղիշէ մեր կարծիքն կը հաստատէ մինչ յիւր պատմութեան բացայայտ կերպով կը գրէ Տրդատայ համար, «որ ի տղայութեան փախուցեալ ի հայրասպան մարդախոռոչ հօրեղբարցն իւրոց՝ ապրեալ անաւ յերկրից Յունաց»:

1. Խոր. զիբք Բ. զԼ. 2Է:

2. Խորենացի մի միայն տղայ յիշէ, զԳրեգոր. (Խոր. Բ. 2Գ):

3. Բուզանդ. Գպր. Գ. զԼ. ԺԸ: Եւ Խոր. զիբք Գ. զԼ. 1Բ. հայլն:

4. Եղիշէ. էջ 132:

ԶԳրիգոր փախցնելուն հակապատկեր կը ներկայացնէ Խոսրովու տան կոտորածն և Տրդատայ փախցնելու պարագաներն. հոս մեծ նախարարներ կը գործեն և զիւրին էր նոցա անվտանգ իրենց թագաւորի ժառանգը ապրեցնել և տանել Հոովմէական կայսերաց արքունիքն, ուր վաղուց սովորութիւն ունէին Հայ թագաւորաց մանուկներ կամ իրրև պատանդ կամ դաստիարակութեան համար զրկուելու:

Ահա երկու մանուկներ վիճակակից աղէտից մէջ, բայց բաղաւոր ծննդեամբ. երկուքն ալ ազնուական արենէ բխած, անծանօթ իրարուց կը սնանին և մեծնան, յունական կրթութեամբ կը զարգանան, մին զէնքի կը դիմէ, բնագլմամբ իւր թագաւորական արեան, իսկ միւսն զրոց վարդապետութեան, նոյնպէս աւանդական ժառանգութեամբ: Տրդատ կոչուած է թագաւորելու, զորաց զուխ անցնելու. իսկ Գրիգոր քահանայագործելու, հովիւ լինելու ժողովրդեան: Գրիգոր անծանօթ չի մեծնար Կեսարիոյ մէջ. Արտաշէն փախստական նախարարազունք կան անդ, որ մի օր մատն և տուր պիտի լինին առ Տրդատ Գրիգորի Անակի որդին լինելու<sup>2</sup>: Սակայն Գրիգոր սնած աւետարանական վարդապետութեամբ, վեհանձնաբար կը գնայ առ Տրդատ քարոզելու ճշմարտութիւնը<sup>3</sup>, և իրրև Քրիստոսի պաշտօնեայ զինքը անոր ծառայութեան կու տայ և հնազանդութեամբ կը ծառայէ անոր<sup>4</sup> յառաջ քան զթագաւորելը: Տրդատ տակաւին Դիոկղետիանոսի բանակի մէջն արդէն իմացեր էր որ Գրիգոր քրիստոնեայ էր<sup>5</sup>, գուցէ տարակուսանքով զիտէր և Անակայ որդի լինելը: Գրիգորի իսկութիւնն կը ստուգուի այն ատեն երբ Տրդատ իւր յաղթութեանց համար ի շնորհակալութիւն կը հրամայէ Գրիգորի գոհեր մատուցանել հայրենի աստուածներուն:

Տրդատ անշուշտ պատահաբար չի հրամայեր Գրիգորի այսպիսի մի մեծ պաշտօն և պատիւ, այլ իրրև վարձատրութիւն միամիտ ծառայութեանը և աշխատութեանը՝ որով գոհ արած էր զՏրդատ. սա ևս միտքը դրած լինելով զնա բարձրացնել (կեցուցանել<sup>6</sup>) կը կոչէ քրմութեան պաշտօնին, որոց անկ էր պսակներ և թաւ ոստեր ծառերու նուէր տալ Անահիտի պատկերին կամ քաջ վահագնի արձանին: Գրիգոր կը հրաժարի այդ պատիւէն իրրև քրիստոնեայ, չուզելով սուտ աստուածներու պաշտօնեայ լինել:

Ով զիտէ հնոց բարքերը, ներկայ պարագային մէջ դժուար է հաւատալ Ագաթանգեղոսի խօսքերուն որ Գրիգոր մի օտարական և ան-

1. Որոյ (Տրդատ) հասեալ ի Կեսարիա յոլովք ի նախարարացն ընդ առաջ լինէին: Եւ եւ լեալ յաշխարհս, գտանէ զՊտայ... զի թէպէտ և ոչ ծանեալ զճշմարտութիւն յաղագս Աստուծոյ, սակայն զաստութիւն կոտցն զիտաց: Նոյնպէս էր և սան նորա Խոսրովիզուխա: (Խոր. Բ. զԼ. 2Բ):

2. Տաճատ իշխան Առջոցք. սա էր որ յակայն զգացոյց աներոյն իւրոյ Արտաւազայ... զԳրիգորի Անակայ լինել որդի... որպէս նմուտ եղեալ ի Կեսարացոց քաղաքին ըմակելով: (Խոր. Բ. զԼ. 2Բ):

3. Բայց... Գրիգոր անցեալ զնաց առ Տրդատ զհայրենեացն հատուցանել պարտիս, կամ որպէս պարտ է սոնլ ճշմարտութեամբ՝ զառաքելութեան վիճակ մերոյ աշխարհիս և զքահանայութեանն հանդերձ մարտիրոսութեամբն վարժելով (Խոր. Բ. զԼ. 2):

4. Գրիգորիս... ել և զնաց առ Տրդատիս ըստ նիշտ պաշտամամ. (Ագաթանգեղոս էջ 43):

5. Իսկ իրրև զգացեալ Տրդատիս վասն Գրիգորի թէ քրիստոսական պաշտամանն հաղորդ է .... (Ագաթ. էջ 43):

6. Եւ ևս գոհ էի զվաստակոց քոց և ունէի ի մտի կեցուցանել զքեզ. (Ագաթ. էջ 50):

աշխարհիկ մէկն եղած լինի, մինչև Տրդատ նախամեծար ընտրէր քան զընիկ քուրմեր այն հռչակաւոր մեհենատեղեացն, որոնք ինչպէս ասացինք կանխաւ հայկազեան սերունդէն էին և ազգակից արշակունի ցեղին. ուստի երբ Տրդատ Գրիգորի կը յանձնէ զոհեր մատուցանել և պսակ դնել կոոց գլուխը, կը նշանակէ որ Տրդատ համոզուած էր Գրիգորի ազնուական տոհմէ սերելուն, կամ թերևս իսկ իմացեր էր Վահոունեաց ցեղակից լինելուն, և կամաւոր «ըստ հեշտ պաշտաման» այսինքն՝ վասն յաշտից պաշտօն կատարելու համար մտեր էր Տրդատայ ծառայութեան մէջ: Մի կարևոր հանգամանք որ աւելի որոշ կերպով պիտի պարզուի քրիստոնէական շրջանի մէջ:

\*  
\* \*

Տրդատ աշխարհախումբ աւագանւով զԳրիգոր կը յուզարկէ ի կեարիա ձեռնադրութեան համար: Բնական կարգ իրաց այնպէս կը պահանջէ որ նա ի դարձին առաջին հանդիպումն Տրդատայ հետ ունենար և ապա սկսանէր իւր առաքելական քարոզութիւնն: Սակայն այնպէս չէ եղած. պատմութեան կարգն այլ է և մեզի կրկին խորհրդաձուլութեան նիւթ կը մատակարարէ: Ս. Գրիգոր ձեռնադրուելէն ետքը անմիջապէս կ'ուղևորուի դէպ ի Տարօն<sup>1</sup>, ուր էր հռչակաւոր Վահէվահեան մեհեանն, «յաշտից տեղիք թագաւորացն Հայոց մեծաց»: Նա յառաջ քան զձեռնադրութիւնն, Տրդատայ օգնութեամբ քանդել էր Հայոց բոլոր բազմիւններն, և միայն մնացեր էր այս «ութերորդ պաշտօն հռչակեալ, անուանեալն Վիշապաբաղն Վահագնի»: Ինչո՞ւ արդեօք ակն առեր էին, առ երկիւղի՞ թէ վասն պատուի: Զենոր Գլակի պատմութենէն պէտք է կարծել որ առ երկիւղի ժամանակ մը յետաձգեր են քրմաց ուժեղութեան և բազմութեան պատճառաւ, որոնք իրենց ոյժն ուղեցին փորձել նաև Ս. Վրթմանէսի ժամանակ<sup>2</sup>: Սակայն հաւանական չէ այս ենթադրութիւնն. քանզի ինչպէս յետոյ ընկճուեցան արքունի բանակաւ, նոյնը մի տարով յառաջ ևս կարող էին կատարել. ուստի կը հետևի որ մի այլ խորհրդով և ծրագրով յետաձգուած էր այդ հրուշակաւոր մեհենի քանդումն:

Թէ Տրդատ և թէ Գրիգոր կամեցած են նոյն նախկին փայլին և վիճակի մէջ պահել զԱշտիշատն, ինչպէս եղած էր հեթանոսութեան դարաշրջանին. ուստի կամեցած են որ Նոր կրօնից հիմն կամ սկզբնաւորութիւնն անտի սկսի Անդրանիկ Եկեղեցոյ հիմնարկութեամբ, որ առանց եպիսկոպոսական իշխանութեան կարելի չէր: Որով Գրիգոր Երզնկայէն անցնելով ի Սեբաստիա և ապա ի Կեսարիա, աստի հարաւային գետափնեայ ճանապարհով, քերելով Արածանուոյ եզերքը, անցնելով Քար-

1. Եւ իբրև եկն հնաս ի սահմանս Հայոց, լուա Գրիգորիս թէ Վահէվահեան մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ... (Ազաթ. էջ 600):

2. Արդ որք միանգամ զնութիւն կապաշտութեան հեթանոսութեան գնոյն սովորութիւն մինչև յայժմամ ունէին զպատմի, ի մի միարանութիւն ժողովեալք հասանէին իբրև հազարք երկու, խորհուրդ եղեալ ընդ միմեանս՝ սղանանել զքահանայապետ Աստուծոյ զԱրթմանէս (Բուզ. Գա. Գ. զԼ. Գ):

բերդէն<sup>1</sup> իջեր է Տարօնոյ դաշտն: Հոն քանդելով Վահէվահեան մեհեանն և հիմնելով եկեղեցի, ուղղելով սեղան, իսկ և իսկ քրմաց որդիքներէն 12 հոգի եպիսկոպոս կը ձեռնադրէ որոց զխաւորի անունն է Աղբրանոս (Հոովմէական անուն մ'է Albino) որ հաւանական է թէ յառաջ ծանօթ եղած է Գրիգորի և Տրդատայ Կեսարիոյ մէջ, որով առ Կոստանդիանոս զնացած ժամանակ հետերնին կ'առնուն<sup>2</sup>: Գրիգորի այս քայլն վերահաստատութիւն մ'էր քահանայապետական իշխանութեան իւր տան և ազգատոհմի մէջ, քրիստոսական կրօնից նափորտով զարդարուած. յաղթանակ մ'էր որ Վահուենաց ցեղն կը տանէր Տիրքանայ անիրաւ յափըշտակութեան դէմ, և յետոյ պիտի տեսնենք որ իրենց կալուածոց հետ պիտի վերստանան նաև Տանուտէրական պատիւն յորմէ ինկած էին Կարճազատաց դասն: Գրիգոր ուզեց միանգամայն հասկացնել Հայաստան աշխարհին, որ թէ և ըստ տեալեան Միածին Որդւոյն նշանակած տեղն լինելու է Աթոռանիստ Եկեղեցին Հայրապետացն Հայոց ըստ եկեղեցական Եւրիպայետութեան և իրաւարանութեան<sup>3</sup>, սակայն կամեցաւ որ իւր բնիկ նախնեաց սեփականավայրն առաջին եկեղեցւոյ հիմնարկութեան նախապատուութիւնն վայելէ<sup>4</sup>, ինչպէս որ տեսանք հետմանութեան շրջանի մէջ, քան այլ մեհեանները Վահէվահեանն էր հնագոյն հիմնարկութիւնն, թէ և յետոյ Բագարանը աւելի շքեղ տօնախրմբութեանց հանդիսավայր դարձաւ: Եւ Տրդատ Վաղարշապատէն չչարժեցաւ, մինչև որ Գրիգոր չդիմեց զալ ի Բագարան, ուր կամեցաւ Տրդատ իւր հանդիպումն Գրիգորի հետ, նոյն իրաւացի հպարտութեամբ, որով Գրիգոր պատուեր էր իւր բնավայրը: Բագարան կը հանգչէին Տրդատայ նախնիք, որոնք աստուածական պաշտօն և պատիւ կ'ընդունէին ի նախնեաց հետէ, հոն կը դիմէր Հայաստանի ժողովուրդն իւր համազգային տօները տօնելու: Տրդատ իւր և ժողովրդի մկրտութեամբ ուզեց որ սրբագործուին հեթանոս տօները և Աըշակունեաց յիշատակն անոնց հետ յաւերժանայ հայ սրտերու մէջ<sup>5</sup>: Այս զուգադրութեամբ թագաւորական և Քահանայապետական գաւազաններն համհաւասար շուք և իշխանութիւն սկսան բանեցնել իւրաքանչիւրն իւր կոչման և շրջանի մէջ<sup>6</sup>. երկուքն ևս գիտակից թէ մէկ ազգէ և մէկ տոհմէ սերած

1. Այժմուս յաւմամբ կոչուած Խարբերդ: Մեզ թուի սա լինել Խորենացու յիշածն ուր Վաղարշակ և Մորփիղիկէս պատերազմով պատահեցան իրարու « Բայց պատահն միմանց առ բարձրաւանդակի միոջ բլրով քարազգալաթմիլ, որ այժմ ասի Կողոնիս »:

2. Անոյր ընդ իւր գմեճ արքեպիսկոպոսն Գրիգոր և զնորուն որդին զԱստակէս և զԵպիսկոպոսն Աղբրանոս: (Ազգթ. էջ 650):

3. Այսպէս ի Հոովմ Մայր ամենայն եկեղեցեաց է Լատերանու եկեղեցին. զինս է առաջին շինուած եկեղեցին Կոստանդիանոսի ձեռամբ. իսկ Վատիկանը կը մնայ Կեղբոն Եկեղեցական Եւրիպայետութեան և վարչութեան:

4. Զայնու ժամանակաւ երթեալ հասանէր Իպս. Վրթանէս ի մեծն յառաջին ի մայրն եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարօնու: (Բուզ. Գպ. Գ. զԼ. Գ):

5. Քանզի այնպէս իսկ սովոր էին եպիսկոպոսապետն Հայոց, հանդերձ թագաւորօքն և աշխարհախուժ բազմութեամբն պատուել զնոյն տեղիս, որ յառաջ էին տեղիք պատկերաց կոչոցն, և սպա յանուն աստուածութեան սրբեցան և եզնն տուն աղօթից և տեղի ուխտից ամենայն ումեք: (Բուզ. Գպ. Գ. զԼ. Գ): Գարձեալ և յայնմ աւար ասն զիպեցաւ յիշատակի մեծին Յովհաննու որ ի Գրիգորէ և ի Տրդատայ յաւանին Բագաւանին կարգեալ էր: « Բուզ. Գպ. Գ. զԼ. Ե »:

6. Զի թագաւորն զոցս աշխարհին և զս, որպէս ասեն, ընդ մի համար են: (Բուզ. Գպ. Գ. զԼ. Ե):

են, երկուքն ևս արշակունի « ըստ եղբայրութեան բնութեան » բայց բնիկ հայկական թագադիր իշխանաց պայազատներ <sup>1</sup> :

Եթէ Գրիգոր իր դայեկէն լսելով հօր գործերը, բարոյական պարտք համարեցաւ երթալ առ Տրդատ իր անձը ծառայութեան տալով փոխարինել եղած անիրաւութեան և եղերան, Տրդատ ևս ոչ պակաս ազնիւ և վեհանձն զգացմամբ ուզեց դարման տանել իւր նախապապի Տիգրանայ անիրաւութեան վերադարձընելով առ Գրիգոր և առ նորա տոհմայինսն բոլոր յափշտակուած զիւղերն և կալուածներ, որոնք ի բնէ սեփական էին Վահունեաց ցեղին, զոր Բուզանդ խնամքով երկու անգամ յիշած է Գրիգորի ձեռակաւ իշխանութիւն անուանելով <sup>2</sup> և ասոնք էին տասն և հինգ գաւառներ, որոց զլիսաւորներն էին Այրարատ, Դարանաղի, Եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Ծոփք <sup>3</sup>, իբրև սեփական ի բնէ Գրիգորի տանն և ազգին: Տրդատ ոչ միայն հողերը դարձուց առ Գրիգոր, այլ նաև Տանուտէրական իշխանութիւնն շնորհեց յանձին Գրիգորի և իրեն յաջորդներուն, իբրև արքայի կողմնակալ, վարիչ և դատաւոր իրեն ստորադրեալ գաւառներուն <sup>4</sup>, նաև վերակացու և հրամանատար տեսուչ և հոգաբարձու ամենայն եկեղեցիներուն Հայոց Մեծաց:

Տրդատայ այս առատաձեռնութիւնն իսկ փաստ մ'է մեր կարծեաց հաստատելու թէ Արշակունիք Հայկազեան թագադիր իշխաններու պաշտպաններն են և « ըստ եղբայրութեան բնութեան » կոչուած Արշակունիք իբր Արշակայ պաշտպանեալ և ազատագրեալ. իսկ թագաւորական զարմն Վահագնէն սկսած երեք գլխաւոր ճիւղերու բաժնուած էր, Այրարատեան Բագրատունին և Վահունին. որով իբրև եզրակացութիւն կը հետևի թէ Գրիգորի նախնիք Վահունիք էին և Տրդատայ ձեռամբ վերաստացան իրենց բնիկ սեփական գաւառներն և Տանուտէրական իշխանութիւնն Քահանայապետականին հետ զուգած: Այս եզրակացութեան որքան յաջող լինելն թողում ուշիմ ընթերցողաց դատել. բայց մեզի կարևոր էր մեր առաջարկեալ հարցին լուծումն տալու համար, որ խոստացանք ի սկզբբան Ս. Մեսրոփբայ ծագման և ազգի վրայ խօսել՝ լուսարանելով կորեան հակիրճ խօսքերն և ջանալով ապացուցանել թէ Ս. Մեսրոփբ Գրիգորի ցեղակից էր և թագաւորական տան ազգական որով Վահունեաց ազգի Տանուտէրն և ապա գրոց գիւտի և դպրութեան Հայր, Հայոց ազգին և Եկեղեցւոյն կեցուցիչ:

Հ. ԳԱՅՐԻԷԼ Վ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Շարայարեկի

1. Եւ որպէս ետուն զրոյց որք ընդ նմա եկեալ էին, թէ ազգակից համարին զաս և մերձաւոր (այսինքն արեւնակից) թագաւորին: (Բուզ. Գագ. Գ. 41. Ե):  
2. Բուզանդ. Գագ. Գ. 41. ԺԳ:  
3. Զայնու ժամանակաւ Ս. Ներսէս շրջէր՝ ընդ իւր ձեռական իշխանութիւնսն. զի հնգետասն գաւառ զայն ձեռակալմ իշխանութիւն ունէին իբրև սեփական ի բնէ, առանձին առաջով նոցա էր կարգեալ: (Բուզ. Գագ. Գ. 41. ԺԳ):  
4. Դանիէլ... Վերակացու և զլիսաւոր Եկեղեաց (Եկեղեցեաց) Նահանգին Տարօնոյ, Գրիգորի ձեռական իշխանութեանն կողման մասին զորձակաւութեան, մեծի դատաւորութեանն ունէր զիշխանութիւնն զայն առանձինն, այլ վերակացու և հրամատար տեսուչ և հոգաբարձու ամենայն եկեղեցեացն Հայոց մեծաց ընդ ամենայն տեղիս: (Բուզ. Գագ. Գ. 41. ԺԳ):

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՎԲԱՅ ՎԱՐՈՒՑ

ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՑ ԳԻՒՏԻՆ\*

Տիրաւան յարբունիս զրաւելով զԱշտիշատ զիւզը, ընդ նմին զրաւեցաւ նաև Հացեաց կամ Հացեկաց զրախան<sup>1</sup>։ Սա կը գտնուէր յաշտից տեղերու բարձրաւանդակի ստորոտն՝ ծործորի մը մէջ փոքրիկ առուակի մը եզերը։ Երեք բազիններն սարաւանդակի վրայ շինուած էին. ասոնցէն հագիւ քարընկէց մի ցածր կը տարածուէր Հացեաց Գրախան, ուր Սուրբ Գրիգոր կեսարիայէն եկած ժամանակ, որպէս զի Վահէվահեան մեհեանները քանդէ, ջորիք կանգ կ'առնեն և Հրեշտակի ձեռամբ կ'իմանայ որ Սրբոց կամքն է հոն հանգուցանել զիրենք. ուստի Ս. Գրիգոր վկայարան մը շինելով սրբոց նշխարքը պատուով կը տեղաւորէ. սա էր Յովհաննու մարգարէանոց կոչուածն<sup>2</sup>։ Թէպէտ Տրդատ պարգևեց Աշտիշատն Գրիգորի և զարձաւ սեփականութիւն և ձեռական իշխանութիւն անոր տանը, սակայն բնակիչներն իրենց կորուսած ազնուական պատին չգտան երկար ժամանակ, և այդ Նախարարական տունն իւր բարձր չունէր նաև քրիստոնեայ թագաւորաց տաճարի մէջ։ Տրդատ ձեռական իշխանութիւն շնորհած էր Գրիգորի և իւր զաւակաց, որով Յուսկան որդիքն Պապն և Աթանազիոսէան զիւրեանց հոգևոր պատուականութիւն, ստահակորէն մերժելով, սիրեցին իրենց մարմնաւոր տոհմի ազնուականութիւնն և զինուորական վիճակն, և իրենց կին առին Տիրան թագաւորի քոյրերը, Պապայ կնոջ անունն էր Վարազդուխտ, իսկ Աթանազեանին՝ Բամբիշն։ Ահա դա կը նշանակէ որ Գրիգոր ոչ էր «այր մի օտարական և անաշխարհիկ» ինչպէս վկայարանութիւն գրողն երևակայեր է. այլ այնքան բարձր ազնուականութեամբ՝ մինչև փեսայանալ թագաւորին, որ ենթադրել կու տայ թէ կամ արշակունի ցեղէ պէտք էր լինել կամ ուրիշ թագաւորի մը զարմ։ Այս երկու ամուսնութիւնք

\* Տես Բագմովէլ 1914 թիւ 2 էջ 49.

1. Եւ յաճախ յակն աքրերն ի ներքոյ սարաբարձր մեհնատեղոյն Հերակեայ, որ կայ զէմ յանդիման լերինն մեծի, որում Յուլն անուանեալ կարգան, ի բազնին տեղոջէ ի բացագոյն իրեն քարընկէց մի ներքոյ կուտէ, ի յոյզն ծործորակին ի սակաւ անտառակին ի հացուտ պտբակին՝ որում անուն տեղոյն իսկ Հացեաց զրախտ կոչեն։ (Քուգ. Դալ. Գ. էջ 38).

2. ... յերկրին Տարձոյ, որ էր մայր եկեղեցեացն Հայոց, մօտ յակն ազրերն՝ ուր անէր Գրիգոր զմիտութիւնս աշխարհագոր բազմութեանն, ի տեղաջն՝ որ անուանեալ կոչի Հացեաց զրախտ։ (Քուգ. Դալ. Գ. էջ 42). Կարծեալ՝ Իբրև զարձեալ զայր ի կողմանց Յունաց, բարձեալ բերէր ընդ իւր նշխարս ինչ յակերացն մեծի մարգարէին երանեալ Մկրտչին Յովհաննու... և զես ընդ փոքր ձորակ մի անցանել կամէին ընդ ջուր մի սակաւ, զտեղի առին սղիտակ ջորիք կառացն՝ ուր կային զանձք աստուածային՝ նշխարք նորա, ոչ կարացին հանել ընդ ձորակն։ Եւ յայտնեալ առ Գրիգոր Հրեշտակ Տեան ասէ. Հաճեցաւ Տէր բնակել սրբոց Աստուծոյ ի տեղաշէ. (Ագաթ. էջ 607-608).

3. Ագաթ. էջ 50.

հաւասարապէս երջանիկ չեղան: Պապ անորդի ելաւ աշխարհէ, իսկ Աթանազինէն ունեցաւ մի որդի միայն՝ Ներսէս անուն: Սակայն Բուզանդ կը յաւելու որ թէպէտ Պապայ բուն կնոջէն զաւակ չմնաց, բայց նա ունէր մի հարձ Տարօն գաւառի Կարճագատաց Հացեաց գիւղէն, և Հացեկացի հարճէն մնացեր է մի զաւակ, որի անունն Վրիկ կը կոչուէր<sup>1</sup>:

Բուզանդ տարօրինակ է իւր պատմագրութեան մէջ. նկատուած է որ նա ժամանակի մարդն է, ապրած է այն պատմութեանց մէջ զոր կը գրէ իբրև ականատես և զործող: Նա ուրեք ուրեք պատմածներու մէջ այնպիսի սուր և խորհրդաւոր դիտողութիւններ և ակնարկներ կ'անէ, զոր չէ մարթ համարել թէ առանց պատճառի և նպատակի լինի. այդպիսի նկատողութեանց մին է Պապայ հարճի մասին տուած ծանօթութիւնն, որ բառ ինքեան լուրջ մատենագրի համար ծիծաղելի էր յիշատակել մի աննպատակ դէպք, ինչպէս մի հարճից զաւակի մը ծնունդն. որքան հարճեր ծներ են զաւակներ և մնացեր են անյիշատակ, մոռացութիւնն ծածկել է հետախաղաղ. բայց ո՛չ Կարճագատաց Հացեաց գիւղի հարճինը: Բուզանդ ունեցեր է իւր մարի մէջ մի խորհուրդ, մենք պէտք է զայն բացատրենք: Նախ յիշելը թէ Աթանազինէին մնաց մի արու զաւակ իւր Բամբիշն կնոջէն, շատ հասկանալի է. վասն զի այդ զաւակն եղաւ Ս. Ներսէս «այր սքանչելի և զարմանալի» և մեր տոհմային պատմութեան ամենամեծ դէմքն, ուստի ծնողի և որդւոյ յիշատակութիւնն միմեանց փառքը կը յաւելուն: Իսկ ի՞նչ մեկնութիւն կարող ենք տալ Պապայ մասին բաւական խնամքով և մանրամասնօրէն գրուածին, որ իւր բուն կնոջէն զաւակ չունեցաւ, բայց իր յապօրինի(?) անկողնէ ունեցաւ մի զաւակ, հարճէ մը ծնած, որ Կարճագատաց գիւղէն էր և այդ տղայի անունն Վրիկ կոչուում էր:

Բուզանդ ակներև ունեցեր է աչքի առաջ մի հազուագիւտ դէպք այդ յիշատակութեան մէջ, և մնացած պատմութիւնն լռութեամբ անցեր է, երկիւղ կրելով անշուշտ ստուեր մը ձգելու մի մարդու վրայ, որի ապագան այնքան մեծ, այնքան փայլուն պիտի լինէր, մինչև գերազանցել քան զամեն ժամանակակից առաքինիքն<sup>2</sup> և այդ մարդն էր Մեսրոպըն «ի Տարօնական գաւառէ, ի Հացեկաց գեղջէ, որդի առն Երանելոյ Վարդան կոչեցելոյ<sup>3</sup>»:

Գրիգոր Լուսաւորչի թոռներ, Աթանազինէն և Պապն, մի մի զաւակ ունեցան: Պապն, իր բուն կնոջ մահուանէն յետոյ անշուշտ՝ երկրորդ ամուսնութեամբ՝ Հացեկացի հարճի հետ, կ'ունենայ զՎրիկն. իսկ Աթանազինէն՝ զՍ. Ներսէս: Գրեթէ մի և նոյն բնի մէջ ծնած և սնած ազնուազարմ մանուկներ, որքան տարրեր կերպարանքով կը ներկայացնէ մեզի ժամանակակից պատմութիւնն: Բուզանդին բառ կը պակսի զովելու և փառաբանելու գնեբրտէս, իսկ սորա հօրեղբոր որդին՝ հազիւ

1. Բայց Պապայ ի բուն ի կնոջէն ոչ մնաց, այլ էր նորա հարճ մի ի զաւառն Տարօնոյ, ի Հացեաց գեղջէ Կարճագատացն. և մնաց որ ի հարճէ անտի ի Հացեկացոյն, որում անուն իւր որդւոյ հարճին Վրիկ կոչէր: (Բուզ. Գր. Գ. զԼ. ԺԹ):

2. Խոր. գիրք Գ. զԼ. ԿԷ:

3. Կորիւն էջ 6. Վնեատիկ:

փախստական յիշատակութեամբ կը թողու մեզի, այն էլ մի տարակուսական մանկական անուն, ոչ միայն՝ այլ և աղճատուած, կարճատուած ասենք, Վրիկ, ըստ գիւղական կոչման: Խորհրդաւոր է Բուզանդ իր գրածներուն մէջ:

Տիրան թագաւոր տարակոյս չկայ որ արքայավայել խնամք ունեցած է իւր թոռները կրթելու, որոնք նախկին դաստիարակութիւնն Յովհանու Մարգարէանոցի մէջ ընդունած են և ապա ուզարկուած ի կեսարիա յուսումն յունարէն դպրութեան: Ներսէս իւր բովանդակ կենսագրութեամբ մի լուսաւոր կոթող է, որ կը նշողէ Հայաստանի ամեն կողմերն, մի հրաշալի արծիւ է որ թևատարած կը խոյանայ ի պաշտպանութիւն թագաւորական թագին, ազատաց և իրաւագործի շինակաւնաց. Ներսէսի լոյսի մէջ ամեն ոք խաւարեր է, իսկապէս Հայաստանի Տէրն է և Հայրն: Տակաւին մինչ աշխարհիկ կեանք վարէր, մտաւոր և հոգեկան ձիրքերով և մարմնոյ արութեամբ և վայելչութեամբ անհամեմատ էր, նմանը չունէր Նախարարներու մէջ, միտ դնելով այն գեղեցիկ նկարագրութեան զոր մեզ հասուցեր է Բուզանդ<sup>1</sup>: Բայց Վրիկի մասին ոչ մի բառ, ոչ մի գրոյց, վարմանալի է այդ լուսութիւնն:

Բայց մի բան զիտուած է որ Ներսէսի վարուց գրողն եղած է մի ընտանի և ներքին մարդ, որ նորա հետ կարողացել է մտնել նաև թագաւորական տան սեմէն, ընտանեանալ ամեն նախարարական տներու հետ, որով այնքան մանրամասնօրէն կը նկարագրէ իւր ժամանակի մարդկանց, իշխանաց, թագաւորաց բարքն ու վարքն, հին և նոր սովորութիւնք, վարչական թերութիւնք և բարեմասնութիւնք և այլն: Ընդհանրապէս կարծուած է Փաւստոս ժամանակագիրն, որ անշուշտ այլ անձն լինելու է այն Փաւստոսն որ զՆերսէս սարկաւազ ձեռնադրեց. Բուզանդ զՓաւստոս Երևուսի<sup>2</sup> կ'անուանէ: Սակայն զարմանալի է որ այդ Երևուսի Եպիսկոպոսն է արդեօք Ս. Ներսիսի թագման ներկայ եղող, թէ այդ յիշատակութիւնն մի եկամուտ glossa համարելու է, քանի որ շարագրութեան կարգն այդ կը թեւադրէ, ուր Փաւստոս և Տրդատ երկու « և » ով միջանկեալ են ընդ « Պաշտօնէից եկեղեցւոյն » « և Մուշեղ Սպարապետին », ասոնք բաւական էին հապճեպով սրբոյն մարմինը ուճրագործութեան վայրէն փոխադրել իւր սեփական գիւղն ի Թիլ. ուր հանդիսապէս կը կատարուի յուզարկաւորութիւնն ի գերեզման: Իսկ երրորդ Փաւստոս Եպիսկոպոս Զորթ Ներքինեոյ հետ աղբատանոցներու տեսչութեան պաշտօնով միշտ գաւառներ կը պտրտէր, և հազիւ թէ գրադած լինի քաղաքական կամ եկեղեցական խնդիրներով, որով մի այնպիսի բարդ և նուրբ պատմութիւն գրեթէ անկարելի էր գրել մէկի մը որ քայլ առ քայլ հետևած չլինի թէ Ներսիսի և թէ ժամանակակից

1. Այլ է ժամանակին յայմիկ էր ի վարս զինուորութեան, ի զորձակաւութեան, սիրելի սենեկապետ արքային Արշակայ, հաւատարիմ ի վերայ ամենայն կարգաց կենաց թագաւորութեան ի ներքոյ և արտաքոյ, Այր էր սա մեծ և բարձր ցանկալի հասակաւ և վայելուց զեզով. զի ոչ զտանէր ուրեք նման նմա զեղեցկութեանն ի վերայ երեսաց երկրի, տենչալի, ցանկալի, զարմանալի. և ահազին ամենայն նայեցող տեսողաց և նախանձելի յարութեան ի զինուորական կրթութեան. (Բուզ. Գա. Գ. զԼ. Գ.)

2. Ի կոչեցին զձերբուսի եպիսկոպոսն՝ որում անուն էր Փաւստոս: (Բուզ. Գա. Գ. զԼ. Գ. էջ 70).

Թագաւորաց գործերուն, հասարակական ոգւոյն և հոսանքին. և այդ միակ կարող և սրահայեաց մարդն մեզի կ'երևի Պապայ հարձորդին Վրիկ, որ իւր ծագումով և ուսմամբ ամենայրմարն էր ներքին մարդ լինելու և կարող հաւատարմութեամբ զրի առնուլ ինչ որ կը տեսնար աչքով և կը լսէր ականջով: Ոչ ոք աւելի քան Վրիկն կրնար հիանալ, սքանչանալ Ներսէսով և ոչ այնքան դառնացած ոգւով կշտամբանք և յանդիմանութիւն և անէծք գրել Արշակունեաց տան, երբ Ս. Ներսէսի մահուանէն յետոյ Պապ առ նախանձու և ատելութեան կը ջնջէ ամենայն բարեկարգութիւն զոր արել էր և հաստատել Ս. Ներսէս իւր իշխանութեան տակ զանուած զաւաններու մէջ, և այս ամենքի վերայ կը գրաւէ յարցունիս Եկեղեցւոյ հողերը, զոր տուած էր Տրդատ Ս. Գրիգորի<sup>1</sup>: Մի օտարական յոյն ժամանակագիր չէր կարող այն իրաւացի ցաւն զգալ և ոչ այն անողորբ գրիչն գործածել, ինչպէս Վրիկ, իւր հօրեղբօր որդւոյ համար, որոյ մեծագործութիւն այնպէս խժոժարար առաթուր զարկաւ Պապ և զրկեց Եկեղեցին և եկեղեցականները իրենց հասոյթէն և համարձակութիւն տուաւ հեթանոսութեան և կոսապաշտութեան հակողներուն յայտնապէս շատ տեղեր կոոյ պատկերներ կանգնելու<sup>2</sup>:

Ի զուր թուի ջանալ պաշտպանել այն կարծիքն որ Բուզանդի գրիչն յոյն լինի ազգաւ, զի մատենագրի ոգին այդ կարծեաց դէմ կ'ազաղակէ. նա ամեն մի պատմուածքի մէջ հայկական նկարագիրն, ազգային զգացմունքներն կը ցոլացնէ կարմիր թելի նման, որ օտարի համար ոչ թէ շատ դժուար՝ այլ և անկարելի բան էր: Մինչդեռ Վրիկ ազգաւ և հայրենեօք հայ, նախանձաւոր իւր տոհմի և ազգի մեծութեան և փառաց սկսած Ս. Գրիգորէն մինչև Ներսէս՝ սքանչելի շրջանակի մէջ կը դնէ անոնց պատկերը. և զուգակշիռներու մէջ գերադաս քան զարշակունիս: Տեղեակ է նա ամենայն դիւանագիտական արուեստին, քաջ վարպետի մօտ աշխատեք է, և այդ արուեստը, արքունի դպրութիւնը, թագաւորաց գործերը յիշատակագրել, պիտի աւանդէ Վրիկ իւր որդւոյն, զորոմնելով նախ անոր մատաղ սրտի մէջ Ներսիսի առաքինութիւնըն, իսկ մտաց մէջ արտաքին գիտութեանց հմտութիւնն. որով նա կորիւնէն կրկին տեսակաւ երանելի պիտի կոչուի, մին իւր առաքինի վարուց համար և միւսն Մեսրոպրայ Հայր լինելուն:

\* \* \*

Մեր ուսումնասիրութեան սկիզբն յայտարարեցինք որ նպատակ դրած ենք լուսարանելու կորեան տուած հակիրճ տեղեկութիւնը Մես-

1. Իսկ Թագաւորն Հայոց Պապ... ոչ յազնցաւ մահուամբ նորա (Ս. Ներսէսի) այլ ջանայր այսպէս թէ զինչ միանգամ կարգը իցեն ուզողութեան ի Ներսիսէ նդեալ յեկեղեցւոյն, եղծեսցէ և խանգարեսցէ... Եւնաա ևս յարցունիս զհոգ եկեղեցւոյն, զոր տուեալ էր Թագաւորին Տրդատայ... (Բուզ. Գալ. Ե. զԼ. ԼԱ):

2. Յետ ելից նորա յաշխարհէս բազում զաւանց Հայոց և բազում մարդիկ ի հնութիւն դիւսպաշտութեան զարման, և ընդ բազում տեղիս Հայոց կուսա կանգնեցին ի համարձակութենէ Թագաւորին Պապայ... (Բուզ. Գալ. Ե. զԼ. ԼԱ):

րովբայ մասին թէ «էր ի Տարօն գաւառէ, ի Հացեկաց գեղջէ որդի առն երանելոյ Վարդան կոչեցելոյ»:

Խօսեցանք բաւականօրէն Տարօն գաւառի և անոր բնատէրանց վրայ, ապացուցանելով որ Վահագնի ցեղէն էին և ըրմական պաշտօնով և իշխանութեամբ ճոխացած:

Եկարագրեցինք Հացեաց զրախտի տեղը և զիրքը, Աշտիշատու Մեհենատեղեաց մի մասը, որ գրաւեցաւ յարքունիս և բնակիչքն կորուսանելով Տանուտէրական պատին կոչուեցան Կարճագատը: Արդ կը մնայ բացատրել և հաստատել թէ Կորեան երանելի Վարդանը, ոչ այլ որ է բայց եթէ Բուզանդի Վրիկն, որ Կարճագատաց Հացեաց զրախտի հարճէն ծներ էր, որդի Պապայ, որդւոյ Յուսկան, որդւոյ Վրթանիսի, որդւոյ Ս. Գրիգորի Լուսաւորչին: Չայս ապացուցանելու համար, հարկաւոր է բացատրել թէ ի՞նչպէս Վրիկն կարելի է նոյնացնել Վարդանի հետ: Եթէ համոզիչ լինի մեր տուած լուսաբանութիւնն, հարցն ինքնին իւր լուծումն պիտի ստանայ, քանզի Հացեաց զրախտէն ուրիշ Վարդան ելած չէ, որոյ ժամանակն իսկ զուգրնթաց Ներսէսի հետ, զուգահաւասար Ս. Սահակայ ընծայած է Հայ ազգին իւր պանծալի զաւակն:

Ուրեմն մինչև այն համոզման զալու որ Վրիկն նոյն է Վարդան անուան հետ, ուշ դարձուցինք շատ մը հայկական անուանց վրայ, որոնք յիշուած են նոյն իսկ Բուզանդի մէջ և որ այժմ ժողովրդեան գործածութեան մէջ է: Այդ անուններէն շատն կրճատուած են, աղճատուած են, և գրեթէ բնութենափոխ եղած են: Այդպիսի անուններ որ մեր միւս դասական մատենագրաց մօտ գեղեցիկ հնչիւն անուններ են, ընդհակառակն Բուզանդի մէջ բարբարոս ձայն մը ստացած են, շատ անգամ միավանկ և ձայնաւորները սղուած: Այս սովորութիւնը՝ մանաւանդ հայկական անունանց՝ մինչև ցարդ պահուած է առաւելապէս Քուրդ ազգի և Հայ աամիկ ժողովրդեան մէջ. ըրիստոնէական անուններն ևս նոյն ոճով կրճատուած և սղուած են:

Օրինակներով բացատրեմ ասածներս.

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՔ      ՔՐԴԱԿԱՆ ԵՒ ՌԱՄԻԿ ՀՆՁՄՈՒՆՔՈՎ

Արիստակէս—Ռատակէս	=	Ռատո կամ Ռըստոմ
Մաշտոց	=	Մատո
Բագարատ	=	Բագո կամ Բգո
Տիգրան	=	Տիգո
Խաղ	=	Խդո
Վահրամ	=	Վոամ
Հմայեակ	=	Համո կամ Հմո կամ Ըմո
Համագասպ	=	Համգէ կամ Հմգէ կամ Հըմէ
Աւդա (Օտա)	=	Աւդո
Սլաք	=	Սլո
Յուսիկ	=	Յոււսո
Սամուէլ, Շմուէլ	=	Սմո կամ Շմո
Սարգիս	=	Սրգո
Ասատուր (Աստուածատուր?)	=	Ասո

Դաւիթ	=	Դւօ
Սատոյ	=	Սատոյ
Մկրտիչ	=	Մկօ
Խաչատուր	=	Խեչօ կամ Խչօ
Կարապետ	=	Կրպօ
Կիրակոս	=	Կակօ
Վարդուէի կամ Վարդուն	=	Վասօ
Վարդանիկ	=	{ Վրիւ՝ } Փարպ.
		{ Վրէն՝ }
		{ Վրիկ Բուգ.
		{ Կարօ
Կարապետ	=	{ Կրպէ
		{ Կպօճ

**Էւ այսպէս շատ անուններ:**

Վարդանէն—Վրիկ կամ փոխադարձ այլակերպութիւնն հաւաստելու համար, Վարդան անունն երկու ձևի տակ մեզի կը ներկայանայ. մին Կորեան մէջ, յիշելով Ս. Սահակի թողը զՎարդան, ասէ որ կոչուէր Վարդկան (թերեւս ուղիղն Վարդկուն). այս տեղ արդէն կ'երևան կու գայ. իսկ երկրորդ Վրթանէս, յունական ձևէն առած Վարդանէս. այսոր մէջն ունինք Ա կորուստն. որով Վարդանի փաղաքշականն Վրդանիկ կամ Վրթանիկը՝ ժողովրդի բերանը պիտի փոխուէր շատ բնականաբար Վրթիկ կամ Վրիկ, ինչպէս են վերոյիշեալները: Եթէ այսքանը բաւական չէ համոզելու, նոյն Բուգանդէն կը յիշենք մի այլ անուն, որ երկու ձևի մէջ անհաւաստալի պիտի երևար նոյնութեան եթէ տարբեր պատմիչներ զայն չյիշատակէին: Կը խնդրուի նախ կարդալ Բուգանդի գրածն. «Այրս այս Խաղ<sup>2</sup>... ձեռասուն էր սա եպիսկոպոսապետին Ներսէսի... Էւ էին նորա երկու դատերը. և ետ զմինն Ասրկոյ ումնն կին (ի զաւակէ Աղբիանոսի և ազգակից Խաղայ) և զկնի աներոյն իւր, նա կալաւ զաթոռն Խաղայ<sup>3</sup>»: Ապա Խորենացու գրածն. «Բայց յերկրորդ ամին Արշակայ եկաց յեպիսկոպոսապետութիւն Հայոց Ասպուրակէս ամս հինգ<sup>4</sup>»: Ո՞վ կարէ ասել որ Ասրկոյ և Ասպուրակէս մի և նոյն անունն լինին և սակայն մի և նոյն անձն է: Որով ասել է թէ Բուգանդ ժողովրդրդական ձևով գրած է Ասպուրակէսն՝ Ասրկօ կամ Ասրկոյ. կը հետևի ուրեմն նոյն օրինակաւ և Վարդանն, Վրդանիկն կամ Վրթանիկն ևս

1. Նոյնպիսի անհասկանալի անուններն երևելի իշխմանց և նախարարական տներու որպէս. Զոմն. Վորոթ. Գորոթ. Բաաւ ևայլն:

2. Խաղ ազգակից էր Աղբիանոսի որ քրմաց ցեղէն էր և Հացեկաց զիւղէն. (Ազաթ. էջ 629-30).

3. Յետ մաջան Դահակայ եպիսկոպոսի եկաց զուրիս եպիսկոպոսաց Ասպուրակ ոմն ի զաւակէ Աղբիանոսի... (Բուգ. Գրք. Զ. զԼ. Գ. էջ 264 — զԼ. ԺԵ. էջ 270).

4. (Խորենացի գիրք Գ. զԼ. ԽԱ) Զարմանալի է և զիտելի որ Բուգանդ Խաղայ դատերաց մին կը յիշէ որ Ասրկոյի հետ կ'ամուսնանայ, իսկ միւս դատեր համար կը լռէ, մինչ նա ևս երևելի նախարարական տան մը հարս գնացեր էր, Ապառնեանց ազգին: Դա ցոյց կու տայ Խաղայ ցեղի բարձրութիւնն և ազնուականութիւնն: (Խորենացի գիրք Գ. զԼ. ԼԲ):

ըստ ընտանեկան կոչման գրած է Վրիկ<sup>1</sup>։ Կարելի է դեռ դիտել տալ որ Վարդան անունը պատահարաբար դրուած չէ հարճէն ծնած տղուն, այլ ինչպէս սովորութիւն է ամեն տան և տոհմի մէջ պապերի անունը թոռներին դնել, այսպէս Պապ իր ունեցած միակ որդոյ անունն կոչեր է Վրթանէս իւր հաւուն յիշատակն կենդանի պահելու համար։ Աւստի պէտք է ընդունել որ Կորեան յիշած Հացեկացի Վարդանն, նոյն է Բուզանդի Վրիկի հետ, որով ստուգած կը լինինք Ս. Մեսրոպրայ ծագումն։ Յետոյ պիտի տեսնենք որ Մեսրոպր հարճի ծնունդ լինելու պատճառաւ եկեղեցական ձեռնադրութիւն չէ կարող ընդունել։

\*  
\* \*

Եթէ Բուզանդի մէջ որ և է յիշատակութիւն չենք գտներ Մեսրոպրայ մասին, գարմանք չէ. վասն զի և ոչ Ս. Սահակայ յիշատակութիւն կայ, առիթ ունենալով հանդերձ որ մի տեղ հարեանցի կերպով յիշած է Ս. Ներսէսի համար թէ. «Սա լեալ էր ամուսնաւոր յաշխարհակեաց կեանս նախ յաստիս (յանտիս) մանկութեան<sup>2</sup>։

Տարակոյս չկայ թէ ինչպէս Տիրան իւր թոռներն, երկու եղբոր որդիքը, Ներսէսն ու Վարդանն արքունի ծախքով հեռաւոր աշխարհներ զրկեց կրթուելու համար. նոյնպէս հաւանական թուի թէ ըստ կարգին իրենք, Ներսէս և Վարդանն սնուցին և կրթեցին իրենց որդիքն զՍահակն ու զՄեսրոպրն, ոչ միայն ի կեսարիա զրկելով, ուր ըսա Բուզանդայ Ներսէս «ի տղայութենէ սնեալ և ուսեալ ի կեսարացոց քաղաքին Գամրաց ընդ հաւատարիմ վարդապետօք» այլ նաև ի Բիւզանդիոն, ուր առաւելագոյն գիտութեամբ հմտացան աստուածաբանական ուսմանց և յոյն լեզուի և գրականութեան<sup>3</sup>։ Բայց ընտանեկան և քաղաքական կենաց մէջ ոչ ոք անշուշտ աւելի հաւատարիմ վարդապետ կարող էր լինել տաղանդաւոր երիտասարդներուն քան Ներսէս ինքն. որուն քաղաքական կենաց յամենայնի հետեոյ եղած է և բարւոյն նախանձախնդիր Մեսրոպր։ Ինչպիսի՞ տպաւորութիւն թողած է վրան, Ներսիսի ներկայութիւն այն զրից և այն փառաց մէջ երբ նախանձելի էր «յարութեանն ի զինուորական կրթութեան»։ Կը տեսնանք որ Մեսրոպր ևս նոյն շաւղով պիտի ընթանայ և թերևս մասամբ իմն յաղթահարուի ուշիմ աշակերտէն։ Արդարև ինչ գովեստ որ Բուզանդ կը շռայլէ Ներսէսի հասցէին «Նախանձելի յարութեանն ի զինուորական կրթութեան<sup>4</sup>»։ նոյնը առաւելաւն հանդերձ Մեսրոպրայ համար կորիւն կը գրէ «Յանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականաց<sup>5</sup>»։ Այս համեմատութիւնը մեզի մի այլ խորհրդածութեան կը ձգէ ի նպաստ մեր առաջադրեալ խնդրին։

1. Հմտ. նաև Վրիկ Մաղխազ և Վրէն Չիւնական (Փարպեցի էջ 126),  
 Վրէն Վանանդացի (Փարպ. էջ 394),  
 Վրէն Տաշրացի (Փարպ. էջ 356),  
 2. Բուզանդ. Գագ. Գ. զԼ. Գ.  
 3. Բիւզանդիոն... Եւ յայնմ հետ վտակի գիտութեան որպէս ի Թագաւորանխտ վայրի յորդեալ րչիւնն ի քաղաքէն... (Ղազ. էջ 13),  
 4. Բուզանդ. Գագ. Գ. զԼ. Գ.  
 5. Կորիւն Պատմ. էջ 6:

Չինուորական արուեստը միայն ազատագրի դասակարգին սեփական էր, և յաւէտ թուի սիրելի Լուսաւորչայ թոռներուն: Պապ և Աթանազիոնէս, քահանայական պատիւը թողին, և իրենք զիրենք զինուորական արուեստին տուին: Ներսէս նոյնպէս ինքզինք զինուորական ծառայութեան տուել էր և արքունեաց մէջ բարձրագոյն տեղն բռներ էր: Նոյն իսկ Խաղայ պէս սրբակեաց մարդն զերծ չմնաց ձիասիրտրեան մեղադրանքէն որ մասնաւորապէս թուի սիրելի եղած է Վահունեաց ազգին իրրև քաջի արանց վայել արուեստ մը, բուծանելով մօտակայ Խնուսայ դաշտի մէջ մինչև ցարդ անուանի Հայկական Նժոյզներու երամակներ: Մեսրոպը ևս երիտասարդութեան ժամանակէն ինք զինք տուած է այդ արուեստին: Ո՞ գիտէ թէ ինքն ևս այն նախարարներու որդոց թիւէն չէր, որոնք խրախոսեալ Գնելի հարսանեաց մէջ, խոստացան անոր տալ իրենց զաւակները « զորս առեալ մեծապէս հանդերձեաց զարդու և զինու »:

Չինուորութիւնը թեթև արուեստ չէր, այլ դժուարագոյններէն մէկն, որուն համար կը պահանջուի տաղանդ, հմտութիւն և աշխարհավարութիւն: Ամեն աշխարհակալ և մեծ զօրավար ունեցած է այդ յատկութիւններն որով հազարաւոր մարդիկ մէկ կամքով շարժեր է, առաջնորդեր և յաղթանակ կանգնել. յառաջ քան թշնամուն յաղթել, գիտացել են նուաճել և տիրել սիրով և մարդասիրութեամբ իրենց զօրականին: Իրաւ է Մեսրոպը չէ յիշուած աշխարհակալ մը կամ բանակի զօրավար, սակայն նաև ի խաղաղութեան գիտենալ կառավարել իրեն յանձնուած զօրագունդն, պահպանել կարգապահութիւն և հնազանդութիւն զօրաց մէջ, երկիւղի և պատկառանքի հետ սիրելի դառնալ, ահա յայսմ է մեծ մարդոյ արժէքն, և Մեսրոպը յայսմ իր արժանաւոր բարձրութեան վրայ կանգնած կը հանդիսանայ մեզ, զատելով զինքն Կորեան այս խօսքերէն, « Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհակաց կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականաց »: Եւ ինչո՞ւ այդպէս չլինէր այդ ազնուագարմ և հանճարեղ մարդն, այնպիսի բազմահանճար և աշխարհավար վարդապետի քաջարի զօրապետի մը ձեռքի տակ վարժուելով, որպիսին էր Ներսէս Մեծն: Որքան մեծ եղած է Ներսէսի հրճուանքը և վարդանի խանդավառութիւնն ի տես այդ գեղադէմ, պերճահասակ և վառվռուն երիտասարդին, որ կը խոստանար փայլուն ապագայ մը, զոր ինքեանք իսկ չէին կարող գուշակել:

1. Որք հարեալք զաւանդն հոգեորն պատուի, անձամբ զանձին իւրեանց խտորաւոր յարուեստն զինուորութեանն զինեցան: (Բուզ. Գա. Գ. զԼ. ԺԵ):

2. Այլ ի ժամանակին յայնմիկ էր ի վարս զինուորութեան... զզինուորական ձեռն յինքեան բերէր և զարդարեալ էր զեղեցիկ պատմութեանս և (ի) զարդ վայելուչ... զարքունական սուսերն զպողոփատիկն զտեկէպատեանն հանդերձ սկանակաղ մարգարտագարդ կամարան ի սպասու նորս (Քաղաւորին) բարձեալ ունէր: (Բուզ. Գա. Գ. զԼ. Գ.):

3. Ապա կամեցեալ Արշակ Քաղաւորն պատուաւ և ազահութեամբ կարասոյն մեքենայիւ խարել զուրբ եպիսկոպոսն Խաղ, բազում ոսկի և բազում գանձս արծաթոյ և քաղում միտոյս զարքունական միտոյ... տայր նմա: (Բուզ. Գա. Գ. զԼ. ԺԱ.) — Այս Խաղ... Եւ ոչ եղև ի նմ զամաղիւտ ստատնայ, բայց վանն միտոյ նուազի, զի էր պճնոյ առ հանդերձս և միասէր: (Խոր. զԻրք Գ. զԼ. ԼԱ.):

4. Գնէլ... Քաղաւորապէս արարեալ հարսանիս, տայ առատապէս պարգևս ամենեցուն նախարարացն: Որք հաճեալ ընդ նա և սիրեալ, ետուն առ նա զգաւալիւ իւրեանց. զորս առեալ մեծապէս հանդերձեաց զարդու և զինու. և առաւել ևս սիրեցին զնա: (Խոր. զԻրք Գ. զԼ. ԻԲ):

5. Կորեան. Պատ. էջ 6:

Չինուորական արուեստն արգելք չեղաւ Մեսրոպին հետեւելու զիւանագիտութեան. քաջ հմուտ և ճարտար լինելով հելլէն, ասորի և պարսիկ գրչութեամբ, որով երբ խոսարով կը թագաւորէ, կը կոչէ զինքն լինել վարիչ և ուսուցիչ արքայական զիւանին և ծառայողներուն<sup>1</sup>: Մեսրոպը մնաց այդ պաշտօնի մէջ, մինչև խոսարովայ անկումն: Քանզի խոսարով և իւր համախոհներն՝ Սահակ կաթողիկոս և Նախարարք, ա՛մենքն պաշտօնանկ եղան Շապհոյ հրամանաւ, որ եղծեց, խանգարեց ինչ կարգ և հաստատութիւն արած էր խոսարով իւր բաժնի մէջ<sup>2</sup>: Ահա այս դէպքիս մէջ իբր համախոհ իւր ազգակցին Մեսրոպը զիւանապետութեան պաշտօնէն ինկաւ, որ թերևս ինքն իսկ յօրինած էր զաղանի դաշնագրութեան թղթերն Արկաղու հետ. ոչ միայն այս, այլ և միւս նախարարներու պէս իրենն ևս վրդովուեցաւ Տանուտէրական պատիւը:

\*  
\* \* \*

Ուսումնասիրութեանս ընթացքի մէջ ասացինք որ Տիգրան Միջին քրմութեան պաշտօնէն ձգեց զՎահուճիս, անոնց սեփական զիւղն յարքունիս գրաւեց: Վահուճիք զրկուած էին Տանուտէրական պատուէն, և ինկած էին ազնուականութեան դասակարգէն և նոր կոչումն տրուած էր իրենց որ անձանօթ պիտի մնար ընդ միշտ, եթէ Պապն ունեցած չըլլար հարձ մը կարձագատաց Հացեաց զիւղէն: Տանուտէրական պատիւն զլիաւորապէս կը կայանար յայնմ որ ամեն նախարար իւր սեփական գաւառի կառավարիչն էր և դատաւոր և ունէր իր առանձին զօրքն: Տոհմային պատմութեան մէջ երկար դարեր չի յիշուիր Վահուճեաց Նախարարութիւն, մինչև իսկ Բուզանդի ժամանակ, այսինքն այն ժամանակ երբ Տիրան թագաւորի փեսան Պապը, կարձագատաց զիւղէն առած էր հարձը, ուսկից . ծնաւ Վրիկ իրաւագուրկ ազգէ, անմասն կառավարչական պաշտօններէ և պատիւէ: Սակայն Հինգերորդ դարու մէջ, Վարդանանց պատերազմերու ժամանակ Վահուճեաց Տանուտէրն և Վահուճեաց զօրքն մերթ ուխտապահաց մերթ ուրացելոց խմբի մէջ են: Եւ արդէն յառաջադէմ և մեծ նախարարութեանց կարգէն են այնպէս որ Զազկերտ Վահուճեաց Տէրք զԳիւտ անձամբ կը ճանաչէր և միւսներու հետ զինք ալ ի Գուան կոչեց<sup>3</sup>: Բայց արդ խնդիր է թէ Վահուճիք երբ վերաստացան այդ Տանուտէրական պատիւն: Եւ Ս. Սահակի Գահնամակի մէջ Ութերորդ են ըստ կարգի: Բայց յառաջ քան զՍ. Սահակն արդէն եղած կ'երևի այդ շնորհումն բնիկ արջակունի թագաւորի ձեռամբ, զի Սուրբ Սահակ խնդրամատոյց եղաւ Վրամէն հաստատելու

1. Ի տիս մանկութեան ուսեալ զպրութիւն յայն. զինուորեալ ի դուան Հայոց արքային խոսարովայ, կարգեալ յերամ ժամանակիր արքունի զպրաց. (Փարպեցի):

2. Եւ Արտաշէի ընկեցեալ գնա (զխոսարով) ի տէրութենէն... ոչ զմեծն Սահակ և ոչ զոր ի նախարարացն կարգելոց խոսարովայ եթող, այլ վրդովեաց ի պատուոյ իւրաքանչիւր (խոր. զիրք. Գ. 41. Կ): Այս խմբի մէջ եղած է նաև Մամիկոնեան տունը, և Վրամի ժամանակ Ս. Սահակայ խնդրածօք, կը վերահաստատուի ի տէրութիւն իւրոյ ազգին. (խոր. զիրք. Գ. 41. ԿԵ):

3. Զազկերտ... կոչոյ Տրաման տուեալ յականէ յանուանէ զարս՝ զորս ինքն ճանաչէր որոց անուանքն են... ի տօհմէ Վահուճեաց Գիւտ անուն, (Եղիշէ, 76. Վենետիկ):

Նախկին կարգն, զարտուղութիւն անկող իւր թոռնիկի Մամիկոնենոյ վարդանի համար, որ անցաւ ի Չորրորդ՝ կարգ Մեծ Նախարարութեանց, աւելցնելով վրան նաև սպարապետութեան պատիւն։ Ուստի վահուանիք ևս վերահաստատուելու համար այնքան բարձր դասակարգի մէջ, պէտք է ունեցած լինին մի բարձրագոյն տէր և պաշտպան և այդ Տէրն և Պաշտպանն մենք կը համարինք եղած է Ս. Ներսէս Մեծն Արշակ Թագաւորի ժամանակ, երբ սա Ներսէսի օգնութեամբ և առաջնորդութեամբ սկսաւ մեծամեծ բարենորոգութիւններ մտցնել Հայոց մէջ, յորոց մին եղաւ Նախարարաց խանգարուած կարգի վերահաստատութիւնն ինչպէս եղած էր ի բնէ ի նախնեաց հետէ։ Հաւանական է այս միջոցին Ներսէսի միջնորդութեամբ միայն Արշակ իւր ազգակիցներու Տանուտէրական գահն և կալուածքները դարձուցած պիտի լինի, մանաւանդ որ այն ժամանակի Նոր Տանուտէրն կը հանդիսանար Արշակի հօրաքեռ թոռը և Ներսէսի հօրեղբօր որդին, վրիկն կամ վարդանիկ վահուանին։ «Էւ նորոգեցաւ զուարթացաւ տէրութիւնն թագաւորութեան Հայաստան երկրին որպէս և զառաջիննս, մեծամեծքն յիսրայսելիւր գանու և գործակալքն յիւրաքանչիւր չափու»<sup>1</sup>։

Այսուհետև հասկանելի է մեզ բուն բառերու նշանակութեամբ կորիւնի գրածներն թէ «տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհակաց կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականաց»<sup>2</sup>։ Այսինքն Մեսրոպը իսկապէս ժառանգել էր հօրից Տանուտէրական գահն, ունեցել էր իւր առանձին զունդն և զինուորութիւնն, որոց աւելի քան սիրելի՝ եղած է ցանկալի, ասկից աւելի մեծ զովեստ չէ կարելի լինել զօրապետի մը, և ոչ աւելի մեծ պատիւ այնպիսի զօրավարի մը ինչպէս էր Ս. Ներսէս որոյ ձեռասունն եղած էր Մեսրոպը և անբաժան ընկեր նորա անզուգական որդւոյն Սահակայ։ Ուստի երբ կարդանք նոյն կորիւնի մօտ թէ «մերկանայր այնուհետև զիշխանակիր ցանկութիւնսն»<sup>3</sup> կամ Խորենացւոյն թէ «ընկեցեալ յիստ զմարմնական պատիւն»<sup>4</sup> պէտք է հասկանալ թէ Մեսրոպը թողուց հրաժարեցաւ Տանուտէրական իշխանութենէն և պատիւէն՝ ինքզինքն Աստուծոյ նուիրելու համար։ Իրաւ է որ այդ հրաժարումն ակամայ եղաւ, ինչպէս ասացինք, և ստիպողաբար Պարսից արքայի կողմէն, այլ ոչ առանց Նախախնամութեան կամաց, որ զնա մեծագոյն զօրաց և համակ Հայաստան աշխարհի լուսաւորիչ պիտի կարգէր։ Ուստի Հոգին առաւ տարաւ զինքը անպատենբը, սիրեց մենակեցական վարքը, զոր սիրած էր նաև երբ արքունական սուսերն ոսկեղրուազ զարդարուն կամարով մէջքին ունէր, կուսական գեղով պերճացեալ, հրաժարած երկրաւոր ցանկութենէն և յօրինաւոր ամուսնութենէ, որի ակնարկութիւնն կը տեսնուի Խորենացու խօսքէն իսկ, «ի նաւահանգիստ փութայ նաւ խոտովեալ, և ակն

1. Չորրորդ ըստ Գահնամակին մի պատասեկին զոր զխնականն էմին ընծայել է Հ. Ա. Լիշանին և սրահուած է մեր ձեռագրատան մէջ։

2. Բուզանդ Գրգ. Գ. զԼ. Բ. 66.

3. Կորիւն էջ 6.

4. Կորիւն էջ 7.

5. Խոր. զերթ Գ. զԼ. ԽԷ.

ժողովրդի խնդրէ զանապատ<sup>1</sup>»: Կամ մանաւանդ Քուզանդի ի պատիւ Կերսէսի գրած հետեւեալ տողերու մէջ կը գտնեմ նաև Մեսրոպայ իսկական նկարագիրն. «Եւ մինչդեռ իսկ զձև գինուորութեան յինքեան բերէր յերեւելիսս, ներքին մարդոյն զՔրիստոս էր զգեցեալ յանձն իւր. և ազնուական վարս էր յինքեան կերպարանեալ: Եւ յուսովն՝ զոր ունէր՝ խաչեալ էր ընդ Քրիստոսի, և թաղակից եղեալ էր ընդ նմին. և սիրով հաւատոյ մեռեալ էր մեղացն, և յարութեան յուսոյն արդարութեամբ սպասէր<sup>2</sup>»:

Զինուորական վարքը ամենավտանգաւոր միջավայրն է կորցնելու հոգեկան առաքինութիւնները, եթէ Մեսրոպ ժուժկալութեամբ առաքինացաւ երիտասարդական խոռվայոյզ ալիքներու մէջ, որպիսի՞ գերազանց առաքինութեամբը պիտի փայլի Եկեղեցւոյ խաղաղ նաւահանգստի մէջ: Երկրաւոր թագաւորը չկարացին իրենց փառքով և պարգևներով գոհացնել այն լայն միտքը և լայն սիրտը, որ դառնացեալ ամենայն ունայնութենէ, աշխարհակիր ցանկութենէ և մարմնական պատիւէ, կը գնայ անապատները փնտռելու մտքին ճարակ, սրտին խաղաղութիւն: Անապատը, միայնութիւնն մեծամեծ զաղափարներու մայր եղած են, ազատարար և փրկիչներ տուեր են աշխարհի:

Մովսէս անապատէն հրաման ստացաւ տէր լինել Փարաւոնի որոյ ոտից առջև ըլուրներ պիտի խոնարհին և ծով գաւրհուրեալ պատառելով ճանապարհ պիտի քանայ ներշնչեալ մարգարէին: Անապատէն դարձաւ Յիսուս Հոգւոյն զօրութեամբ և փրկիչ երեւցաւ աշխարհիս: Կոյն և Մեսրոպ Քրիստոսի խաչակիր գունդն խոնոտելով, միայնութեան լեռնակեցութեան տալով ինզզինքն, շատ անգամ զիշերոյ խորհրդաւոր լուծեան մէջ Հայաստանի լուսաւորութեան նոր ծրագիրն, զրոց գիւտն կ'երկնէր<sup>3</sup>. այնպիսի գործ որ հաճոյ էր Աստուծոյ և մարդկան:

Կորիւն գոհացուցիչ կերպով նկարագրել է զՄեսրոպ իբրև տիպար ճշմարիտ, սրբասէր և աստուածասէր անապատականի, այս մասին մեր ծրագրէն դուրս է զբաղիլ. մենք պիտի պարապինք Գրոց գիւտի հարցով և ասոր համար հարկաւոր է ընդհանուր և համառօտ տեսութիւն մը մեր գրականութեան վրայ Հինգերորդ դարէն առաջ:

\*  
\* \* \*

Հայաստանի քաղաքական պատկերն, նման է աշխարհագրական քարտին, նկարուած մեծամեծ լեռներով և գետերով, լեռնաշղթաներով, ձորերով, ձորձորներով, անտառախիտ մայրիներով և սարահարթ դաշտագետիններով: Քաղաքական կեանքն լի է մեծամեծ աշխարհակալներու տիրապետութեամբ, արիւնահեղ պատերազմերու յիշատակներով, բարբարոսաց կոտորածներով, աւերածներով, հրդեհներով. մարդկային հեղեղներ՝ որոնք կատաղաբար վազելով սարերու կողերէն, դաշտերու

1. Խոր. զիրք Գ. Պ. Խէ:

2. Բուգ. Գ. Պ. Պ. Գ:

3. Կոյնպէս տաւել հոգ ի մտի արկանէր, զհամաշխարհանս սփոփելով... և զիրո նշանաւորոյ Հայաստան ազգին հաստատել... (Կոր. 8):

երեսէն, սարուծոր, մարգագետին, թագաւորի ապարանքն և աղքատի խրճիթն լուացին արիւնով և անցան գնացին ոչնչութեան ծոցն, ջնջան եղան նոր ազգաց զարգանալովը, բայց իրենց ատելի յիշատակները պահեց պատմութիւնն. իմաստնոց և բարերարաց ի փառս, իսկ անմտից և արիւնարբուաց յամօթս: Բարեւացիք, Ասորեստանցիք, Քաղզէացիք Եգիպտացիներ, ողողեցին Հայաստան, ասոնց թողած քաղաքակրթութեան հետքն նման եղաւ իրենց երկրի գետերուն որոնք բարձրանալէն յետոյ կրկին ամփոփուելով նախկին ափունքներու մէջ կը թողուն շերտ մը սկի և դիրդի, ընդեղէններու բնութեան յարմար և պարարտացուցիչ:

Բարեւոյնի տիրապետութիւնն, աւելի շահաւոր եղած է քան Ասորեստանինը: Գատեւով Խորենացու անգիր գրոյցներէ և վիպասանութիւններէ (poésies épiques) և թուեկեաց երգերէն հիւսած պատմութեանէն, Շամիրամայ և Վանայ բերդի նկարագրութեանց մէջ, շատ զարգացած քաղաքակրթութեան հանդէպ կը գտնուինք. եթէ այդ զարգացումն զուտ հայկական չհամարինք, սակայն անխժտելի է որ նա թողած է անջրնջելի հետք մը դրոշմուած Հայաստանի ժայռերու վրայ որ եղած են կարծր և անտեղիտալի և բմբուս ամեն բնութեանց դէմ, սակայն կակղեր են, խոնարհել են, մտքի և գրչի առաջ բացեր են իրենց ճակատն և խորխոր դշխոյն իբրև հարթուած մոմի վրայ գրեց ինչ որ գրեց, իր կամքը սէրը թէ սուրբ. տակաւին ժամանակն ասոնց մասին կը պահէ իւր խորհրդաւոր լռութիւնն<sup>1</sup>: Չեոքը գրեց անցաւ, լեզուն մնաց, բեկոագրեր կը խօսին անցելոյ մասին, Հայաստան ութ-ինն դար Ն. Ք. ունեցեր է իւր գիրը. թէ և լեզուն լռէ սակայն միտքը դեռ մեզի հետ կը խօսի: Պիտի չխարուինք որ այդ գիրը հանրամատչելի էր, որով ամեն հայ՝ զբակարդաց և դպիր լինէր. սակայն զիւանական կամ մեհենական գրութեանց ծառայեր է երկար ժամանակ. և զուցէ համեմատական պեղումներ Հայաստանի մէջ, մեզի ընծայեն նոյն իսկ բեկոագիր թրձած աղիւսներ, ինչպէս բարեւոյններն և այլն:

Եգիպտական տիրապետութիւնն զուցէ նոյնքան և աւելի շահաւոր եղած է Հայոց քան Բարեւացիներունը, որոնք աւելի զարգացած էին գիտութեամբ, արուեստներով և վաճառականութեամբ, որոց հետ սերտ յարաբերութեան և տուրևաօի մէջ եղած են Հայք: Բնութեամբ յարմարող և հետևող այլև օրինակող հայն, չվարանեցաւ անշուշտ իր ծանր բեկոային գրերն եղանակաւորել Եգիպտական հերթիկ կամ փիւնիկեան գրերու վրայ: Կաղմոս մը կը յիշուի որ Յունաստան տարաւ փիւնիկեան բարեփոխած տառեր: Կոյնպէս Կաղմոս մը ունի Հայաստան (իբր Հայկայ թոռներուց) արդեօք սա ևս Հայաստան բերաւ նոր ձևով գրեր թէ ոչ: Կաղմոս գաղթական կը նշանակէ, ուստի՞ եկած էր մեր Կաղմոսն, Փիւնիկէէն թէ Փոբլզիայէն: Ինչ որ ալ լինի Հայաստանի իշխողներ և քուրմեր ունեցած են գիր մը որ գործած են մինչև Մակեդոնական տիրապետութիւնն և այնուհետև մոռացութեան տրուեր է: Սակայն Հայկական շրջանի մատենագրութեան մնացած բաց ի բեկոագիր տախտակ-

1. Իսկ զամենայն երես քարին իբր զբաւ. զմտ հարթիկ, բազում զիրս ի նմա զրեաց. որոյ հայեցումն միայն զամենայն ի գարմանս ամէ. (Խոր. գիրք Ա. դ. ժ. 9):

ները, Մովսէս Խորենացու յիշած անգիր զրոյցներ այս խորհրդաւոր գրերով միթէ գրուած չէին և մինչև ի քրիստոնէութիւն ևս պահել էին վահագնի վերագրեալ բնաբերգական երգերն և այլք, որք զեղեցիկ մտքի ծնունդ են թէ բովանդակութեան և թէ լեզուի կողմէն, ուրեմն Հայք յառաջ քան զՄակեդոնական տիրապետութիւնը ունեցած են իրենց գրականութիւնը:

Յունական քաղաքակրթութիւնը աւելի մեծ և աւելի արմատական յեղափոխութիւն բերած է մտաւոր զարգացման և բարոյից մէջ: Հայն սկսել էր հոգւով թեքել դէպ ի արևմուտք. Տիգրան միջին յոյն դերասաններ կը հրաւիրէ հայ բեմերու վրայ ներկայացուցներ տալու<sup>1</sup>: Արտաւազը շղթայակիր կլէնպատրայի արքունիքում ողբերգութիւններ կը գրէ որք ճաշակով և իմաստով կը մրցին յոյն դասական թատերագիրներու հետ<sup>2</sup>: Արտաշէս, Տիգրան յունական զեղեցիկադոյն անդրիններ ի Հայս փոխադրել կու տան, զեղարուեստի ճաշակն առած էին նաև հայ քուրմերն զորս ուրախութեամբ իրենց հայրենական Բագիններու մէջ կը կանգնեն: Այս շրջանի պատկանող գրուածք միայն օտար հեղինակներէն յիշուած են յոյն դպրութեամբ գրուած լինելուն պատճառաւ, որ փոխանակեր էր հին գրութեան, ինչպէս յիշեցինք. և արդէն բաւական զարգացած Գրականութեան հանդէպ կը զանուիրք:

Հռովմէական քաղաքակրթութիւնն հսկայական քայլերով սկսաւ ընթանալ, մանաւանդ Օգոստոսի հաշտութենէն յետոյ, երբ այնուհետև Հայաստան իրրև զաշնակից սկսաւ գործել կայսրութեան հետ և Հռովմէական ծերակոյտի ամեն ջանքն եղաւ պահպանել Հայաստանի ամբողջութիւնն, շատ անգամ ասոր անկախութեան համար պատերազմներ մղելով Պարթևաց կամ Պարսից դէմ: Այնուհետև հայ թագաւորներ և նախարարազուներ, իրենց որդիք կամ իրր պատանդ կամ պարզապէս քաղաքակրթուելու համար Հռովմ կը դրկէին, յորոց ոչ սակաւք կը յիշատակէ Տակիտոս իւր տարէգրութեանց մէջ<sup>3</sup>: Արշակունի թագաւորք, հակառակ իրենց համարեալ ազգակից, Պարթևներուն, նախամեծար կ'ընտրէին Հռովմէական կայսրներէն թագն ընդունիլ, քան Պարթևաց արքայից արքայէն:

Կողդիոս զՄիհրդատ թագաւոր կարգած ժամանակ, «Հռովմայ աշակերտ» կը կոչէ և կը պատուիրէ որ իւր արքունեաց և երկրի մէջ մտցնէ և սիրելի անէ Հռովմէական քաղաքակրթութիւնն: Հռովմէական շրջանի գրականութիւնն նոյն յունական նկարագիրն ունի և մենք Խորենացու հատակոտորներուց միայն կրնանք գաղափար կազմել հայ մտքի զարգացման: Տրդատ վերջինն եղաւ որ Գիովղեախանոսէն ընդունելով արքայական թագն, հռովմայեցի քարտուղարով իւր արքունի դիւանք կը վարէր: Տակաւին հեթանոս—հռովմէական գրականութեան կոթող մ'է Ագաթանգեղոսի պատմութիւնն, որ փակելով հեթանոս գրականութիւնը կը բանայ քրիստոնէական շրջանի զարգացումն և յառաջադիմութիւնն որ եղաւ աւելի ճոխ և աւելի նուրբ ճաշակով քան նախկին

1. Պլուտարքոս Զոգակչիւք, Լուկուլլոս:  
 2. Պլուտարքոս Զոգակչիւք, Անտոնիոս:  
 3. Տակիտոս—Տարեգրք զերբ ԺԲ. 10-16:

երկու շրջաններունը: Տրդատ և Գրիգոր Լուսաւորիչ յոյն և ասորի դպրութեանց համար դպրոցներ կը բանան, ընտրանօք տղաք կը զըրկուին կեսարիա, Բիւզանդիոն և Աթէնք:

Հայ երիտասարդութեան մրցումն յոյն ուսանողներու հետ և երբեմն յաղթահարելն, յայտնի է մեզի Գրիգոր Նազիազանցու Ս. Բարսղի վրայ խօսած դամբանականէն<sup>1</sup>, յորում թէ և ումանց իմաստակութեան համար կը գանգատի, բայց և կը յիշէ բարեկամներ որոնք սերտ սիրով կապուած էին Ս. Բարսղի հետ, յորոց զխաւորն հանձարով և ազնուականութեամբ կը գերազանցէր անշուշտ Ս. Ներսէս<sup>2</sup> և Վարդանիկն Պապայ հարձորդին: Աշխարհահռչակ համբաւ ստացեր էր Աթէնք և ի Հոովմ հայկազն Պարոյր կամ Պրոյերեսիոս, որուն հանձարի վրայ սքանչանալով Հոովմ պղնձի ամբողջական անդրի կը կանգնէ, « թագուհին տիեզերաց, թագաւորի բանին<sup>3</sup> », արձանագրութեամբ: Այսպէս նաև շատերը կարող ենք յիշել որոնք Գ. դարու մէջ հայ միտքը զարգացուցին յունական իմաստութեամբ և կրթութեամբ: Գծարդդարար այսքան յառաջադէմ մատենագրութենէ ձեռքերնիս հասած է միայն Փաւստոս Բիւզանդացւոյն երկասիրութիւնն, որ աւելի տարէգրութիւն է քան Պատմութիւն, սակայն նուրբ և մշակուած մտքի երկունք է, որ դարերու ընթացքի մէջ չի կորցնէր ոչ արժէքն, ոչ թարմութիւնն, զի կը ներկայացնէ կեանքի առօրեայ պատկերն, և գրուած ժողովրդեան խօսած կենդանի բարբառով, հայ է գրողը հին յունական վաղնջուց գտնուած տառերով որոնք Մոփաց և Աղձնեաց վարժարաններու մէջ յարմարցուած էին հայ մանուկների համար. բայց « անբաւական ողջ ածել զսիւղորայս և զկապս հայերէն լեզույն » և կարօտէին քաջ արուեստագիտի ձեռքին Մեսրոպրայ կերպածեկուն, որպէս զի լինէր ինքն միայն մեր Ոսկէ դարու գրականութեան աղբիւր՝ Հայր և Ուսուցիչ և Հիմնադիր:

Հ. Գ. Վ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

1. Ճառ ի. Գրիգ. Նազիանզացու. Կրօնիա 1:
2. Ի տղայութենէ անհալ և ուսեալ ի կեսարացոց քաղաքին Գամբաց ընդ հաւատարիմ վարդապետօք. և ցանկալի եղեալ իւրոյն համարուեստն զուզակցացն (հասակակցացն):
3. Եւնասպիոս — Վարք իմաստասիրաց — Պրոյերեսիոս — Կրօնիա 1613: